Ազգ
Azg
18 ՅՈՒՆԻՍ 2011 ՇԱԲԱԹ 112(4731)
ISSN: 1829-1651

# Անձրեւներ եւ հեղեղներ Անկարայում եւ Վրաստանի մի շարք շրջաններում

Թուրքիայի մայրաքաղաք Անկարայում հորդառատ անձրեւներ են, թաղամասեր կան, որտեղ ջուրը հասել է մինչեւ տների երկրորդ հարկ, ինչ-որ պահերի մետրոյի կայարանները, ստորգետնյա անցուղիներն ու թունելները ջրածածկ են եղել: Անձրեւաջրերի այնքան մեծ հոսքեր, հեղեղումներ են եղել, որ անգամ մարդկանց կյանքի համար սպառնալիք է առաջացել: Արդեն երրորդ օրը տեղացող անձրեւները, որոնք երբեմն վերածվում են կարկուտի, կդադարեն միայն հունիսի 21-ին: Կարկուտը բազմաթիվ վնասներ է հասցրել մեքենաներին, շինություններին, կոտրել ապակիները, անգամ մարդիկ կարկուտից վնասվածքներ են ստացել: Նույն պատկերն է եղել Վրաստանի Մսխեթի եւ Կախեթի շրջաններում: Հորդառատ անձրեւներ են նաեւ Թբիլիսիում:

# «Երկխոսությունը բանակցությունների վերածելու փորձերն ուղղակի անընդունելի են»

## *Նախագահ Սարգսյանը թելադրում է իր խաղի կանոնները*



Երեկ սոցիալական ցանցերում լուրեր կային, թե Հայաստանի նախագահն օրվա ընթացքում հանդես է գալու ներքաղաքական խնդիրներին եւ ընդդիմության հետ երկխոսության վերաբերյալ ուղերձով, եւ այդ մասին խոսվել է նաեւ մեկ օր առաջ տեղի ունեցած ՀՀԿ խորհրդի նիստում: Այդ լուրը ճիշտ դուրս եկավ: Միանգամից ասենք՝ հավանաբար ընդդիմության սպասածը այդ չէր, ինչի մասին խոսում էր նախագահը, որը ուղերձում փաստորեն ի՛ր խաղի կանոններն է թելադրում՝ երկխոսության ճանապարհը միաժամանակ միակ ընդունելին անվանելով. «Երկխոսության, քննարկումների միջոցով առկա խնդիրներին լուծումներ գտնելով առաջ շարժվելը միակ տրամաբանական եւ ընդունելի ճանապարհն է մեր ժողովրդի հոգսերով ու մեր երկրի զարգացմամբ մտահոգ ուժերի համար: Բոլոր մյուս ճանապարհները հղի են լուրջ վտանգներով եւ անխուսափելի կորուստներով: Այս մասին մենք բարձրաձայնել ենք անընդհատ եւ այսուհետեւ եւս չենք զլանալու կրկին ու կրկին հիշեցնել նույնը: 2008 թվականի նախագահական ընտրություններից հետո իմ առաջին իսկ հրապարակային խոսքը բոլոր քաղաքական ուժերին եւ հասարակական միավորումներին ուղղված համագործակցության կոչն է եղել: Հետագա ամբողջ ժամանակահատվածում իշխանության գործելաոճը մնացել է նույնը», երեկ այսպիսի ուղերձ տարածեց նախագահի գրասենյակը: Նախագահն ուղերձում նշել է, թե որքան բարդ, երբեմն նաեւ կոշտ բանավեճերով է քաղաքական կոալիցիան կարողացել հանուն Հայաստանի զարգացման՝ դրականորեն համագործակցել խորհրդարանական ընդդիմություն ՀՅԴ-ի եւ «Ժառանգության» հետ. «Մենք ոչ միայն բաց ենք եղել ցանկացած քաղաքական ուժի հետ համագործակցելու առումով, այլեւ ինքներս ենք ձեւավորել համապատասխան մեխանիզմներ», նշել է նախագահը՝ շեշտելով, որ արտախորհրդարանական կուսակցությունների հետ աշխատանքի ձեւաչափը հնարավորություն է տվել համադրել քաղաքական դաշտում առկա մոտեցումները երկրի ու մեր ժողովրդի համար կենսական ամենակարեւոր հարցերի շուրջը. «Հայ ազգային կոնգրեսի հետ երկխոսության նախաձեռնությունն էլ մերն է:

*Տես էջ 2*

**ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՉՔԱՐԵՐԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ**

# ՅՈՒՆԵՍԿՕ-ն դարձել է ֆինանսական վերնախավի գործի՞քը

**Փարիզում ՅՈՒՆԵՍԿՕ-ի շենքում այս կազմակերպության ղեկավարության կազմակերպած «Հայկական խաչքարերի արվեստը» ցուցահանդեսի բացումը տեղի ունեցավ 2011-ի հունիսի 15-ին, ժամը 18-ն անց 30-ին: Միջոցառումն անցկացվում էր Ֆրանսիայում Հայաստանի դեսպան Վիգեն Չիթեչյանի եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ում Հայաստանի մշտական դեսպան Շառլ Ազնավուրի (նա ներկա չէր) հովանավորությամբ: Բազմաթիվ անձինք եկել էին հիանալու խաչքարերի սքանչելի լուսանկարներով: Որքա՜ն մեծ եղավ մեր զարմանքը, երբ նկատեցինք, որ ոչ մի**



**հիշատակում չկա հայկական արվեստի այդ գլուխգործոցների կերտման վայրերի վերաբերյալ:**

**Խաչքարը հայ ազգի հնադարյան մշակույթի եզակի խորհրդանիշ է: Մեկ ուրիշ ժողովուրդ չի կարող հպարտանալ իր մշակութային ժառանգության մեջ նման նրբակերտ գործերի գոյությամբ: Դրանք հայ ժողովրդի հոգին են: Խաչքարի ստեղծման վայրը չնշելը հավասարազոր է տվյալ վայրերում հայերի ներկայությունը ժխտելուն:**

**Արվեստն ու մշակույթը համընդհանուր արժեքներ են, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն պարտավոր է պաշտպանել եւ ներկայացնել ողջ աշխարհին: Հեղինակավոր հաստատությանը ի՞նչ արտաքին ուժ կարող է ստիպել հրաժարվելու իր ընդհանրական կարգախոսից: Նավթային եկամուտները կարո՞ղ էին ծառայել Ադրբեջանի զավթած հայկական հողերում խաչքարերի ոչնչացմանը: 2005-ին հայոց բնօրրան Նախիջեւանում ադրբեջանցիների մի՞թե չավերեցին անծայրածիր հայկական գերեզմանատներ, այդ թվում՝ Ջուղայի գերեզմանատունն իր խաչքարերով:**

**Այդ ժամանակ, չնայած բազմաթիվ բողոքներին, ՅՈՒՆԵՍԿՕ-ն չփորձեց խանգարել հայկական մշակույթի ոչնչացմանը, որի արժեքը համաշխարհային է: Գիտնականները հազվագյուտ եւ անհետացած նմուշները լաբորատորիաներում պահպանում են ֆորմալինի մեջ: Ադրբեջանցիները գուցե կարծում են, որ հայկական որոշ ստեղծագործություններ նավթի մեջ պահելով կարող են հավակնել խոսելու ադրբեջանակա՞ն մշակույթի մասին:**

**Թուրքիան իր հերթին մի՞թե չյուրացրեց բյուզանդական, հունական եւ հայկական մշակույթները, որպեսզի ստեղծի իր ազգային մշակույթը: Առեւտրային ոլորտներում փողի ուժը գերիշխում է մարդկային բոլոր արժեքների (բարոյական, հոգեւոր, մշակութային) նկատմամբ: Չարչիությունը չի ճանաչում այդ մարդկային արժեքները եւ ենթակա է լոկ շահի օրենքին: Արդյոք կարելի՞ էր հուսալ, թե ՅՈՒՆԵՍԿՕ-ն շատ բարձր կլինի այդ ֆինանսական ճղճիմություններից:**

**Առածն ասում է, որ ձուկը գլխից է հոտում: Հասարակ քաղաքացին հոտոտում է ձկան պոչը եւ ինքն իրեն հարցնում. «Մի՞թե նեխահոտը հասել է պոչին»:**

**Այսօր մենք մեզ հարց ենք տալիս. «Նավթի վաճառքից ստացվող փողի ուժը կարո՞ղ է ազդել նաեւ ՅՈՒՆԵՍԿՕ -ի նման հաստատության վրա»:**

**ՆԵՐՍԵՍ ԱՐԱԲՅԱՆ**
**Փարիզ**
**Թարգմ. Պ. Ք.**

# Հունիսի 20-ը փախստականների համաշխարհային օրն է

Հունիսի 20-ը փախստականների համաշխարհային օրն է, Միավորված ազգերի փախստականների գծով գերագույն հանձնակատարի գրասենյակը նշելու է փախստականների համաշխարհային օրը արդեն 60-րդ տարին, ընդգրկուն եւ լայնածավալ միջոցառումներով ամբողջ աշխարհով մեկ, այդ թվում՝ Երեւանում:

Հայաստանում պատրաստվել է հետաքրքրական միջոցառումների մի շարք՝ նշելու փախստականների համաշխարհային օրը: Հունիսի 20-ին, ժամը 11-ին ՄԱԿ-ի գրասենյակում տեղի կունենա մամլո ասուլիս՝ ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի ներկայացուցիչ Դամթյու Դեսսալենի մասնակցությամբ, նույն երեկոյան ժամը 19-ին Կոմիտասի անվան երաժշտության տանը կկայանա փախստականների համաշխարհային օրվան նվիրված հատուկ համերգ՝ Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի հովանու ներքո, որը կազմակերպել է «Արվեստների պատկերասրահ» մշակութային հիմնադրամը: Հունիսի 19-ին, երեկոյան ժամը 6-ին տեղի կունենա 1 ժամ տեւողությամբ քայլերթ եւ իրազեկման գործողություն՝ Մաշտոց եւ Թումանյան փողոցների երկայնքով, մեկ այլ այդպիսի քայլերթ տեղի կունենա հունիսի 20-ին: Փախստականների համաշխարհային օրվան նվիրված միջոցառումներ են նախատեսվում նաեւ Հայաստանի տարբեր մարզերում: Հայաստանում եւ աշխարհի այլ վայրերում կազմակերպվող միջոցառումները միտված են մի նպատակի՝ վեր հանել փախստականների դժվարությունները ամբողջ աշխարհում:

**Ս. Խ.**

# Արտահերթ նստաշրջան հունիսի 21-ին

**Հայաստանի կառավարությունը երեկ որոշեց առաջարկել ՀՀ Ազգային ժողովի նախագահին՝ 2011թ. հունիսի 21-ին ժամը 12:00-ին գումարել ՀՀ Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան:**

**Ա. Ս.**

# Վանուատուն «փոշմանել է»

Խաղաղօվկիանոսյան Վանուատու Հանրապետության նոր կառավարությունը չեղյալ է հայտարարել Աբխազիայի ճանաչման որոշումը: Վրացական GHN լրատվական կայքի փոխանցմամբ՝ հայտարարությամբ երեկ հանդես է եկել Վրաստանի արտգործնախարարության Աֆրիկայի, Ավստրալիայի եւ Օվկիանիայի բաժնի ղեկավար Զուրաբ Ալեքսիձեն:

Նրա խոսքերով, երեկ տարածվել է Վանուատուի նոր կառավարության մամլո հաղորդագրությունը, որում մասնավորապես ասված է, որ երկրի նոր ղեկավարությունը չեղյալ է հայտարարել Աբխազիայի ճանաչման որոշումը: Զուրաբ Ալեքսիձեի համոզմամբ, սույն փաստը վկայում է, որ Վանուատու Հանրապետությունը «ճանաչում է Վրաստանի տարածքային ամբողջականությունը»: Նշենք, որ մայիսի 31-ին Աբխազիայի արտգործնախարար Մաքսիմ Գվինջիան հայտարարություն էր տարածել, որ Աբխազիան դիվանագիտական հարաբերություններ է հաստատել եւս մեկ պետության՝ Վանուատուի Հանրապետության հետ: Փաստորեն աննշան մեծությամբ Վանուատուն բավական ուշագրավ քաղաքական նախադեպի հիմք դրեց, երբ կարելի է ճանաչել մեկ պետություն, այնուհետեւ փոխել սեփական որոշումը: Այս որոշումն է ապացուցում, թե որքան հարաբերական է «պետության միջազգային ճանաչվածություն» սկզբունքը:

**Հ. Ա.**

# «Ազատության» երկրորդ նավատորմիղը ամսվա վերջին կուղեւորվի Գազա

## *Բայց առանց թուրքական «Մավի Մարմարա» նավի*

**ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ**

Անցյալ տարվա մայիսին Թուրքիան մարդասիրական օգնությամբ բեռնված «Ազատության» նավատորմիղը փորձում էր ուղարկել Գազա: Սակայն նավատորմիղը դեռեւս նշանակետին չմոտեցած Միջերկրականի միջազգային ջրերում ենթարկվել էր իսրայելական հատուկ ջոկատի հարձակմանը, որի հետեւանքով «Մավի Մարմարա» նավի տախտակամածում սպանվել էր 9 թուրք «ուղեւոր»: Այս միջադեպը ծայր աստիճան սրել էր թուրք-իսրայելական հարաբերությունների լարվածությունը:

2010-ի հունիսին Անկարան Իսրայելից պահանջել էր պաշտոնապես ներողություն խնդրել Թուրքիայից եւ զոհվածների ընտանիքներին հատուցնելու համար փոխհատուցում վճարել, տալով մեկամսյա ժամկետ: Վերջնագրի բնույթ կրող այս պահանջին Իսրայելի ղեկավարությունը արձագանքել էր բուռն հակազդեցությամբ: Վարչապետ Բենիամին Նաթանյահուն հայտարարել էր, որ բացառվում է Իսրայելի ներողությունը, իսկ արտգործնախարար Ավիգդոր Լիբերմանը հավելել էր. «Ներողություն պետք է խնդրի ոչ թե Իսրայելը, այլ ինքը՝ Թուրքիան»:

Այսպիսով, երկու երկրների տարաձայնությունները վերաճել էին սուր հակասությունների: Ըստ երեւույթին թուրքական կողմը վերջնականապես համոզվելով, որ ներողություն խնդրելու հարցում Իսրայելը զիջում անելու որեւէ մտադրություն չունի, իսկ դա ենթադրում է միջազգային ասպարեզում, հատկապես տարածաշրջանում Թուրքիայի հեղինակազրկումը, ձեռնամուխ եղավ «Ազատության» 2-րդ նավատորմիղ կազմելու աշխատանքներին:

«Մավի Մարմարայի» միջադեպի տարելիցին Անկարայից հայտարարվեց, որ Թուրքիան հունիսի վերջերին այս նոր նավատորմիղը կուղարկի Գազա: Իսրայելի պատասխանը դրան ավելի քան կոշտ էր: Մինչ վարչապետ Նաթանյահուն ամենայն վճռականությամբ հայտարարում էր ուղարկելու դեպքում նավատորմիղի բոլոր նավերը ջրասույզ անելու մասին, Թուրքիայում սկսվեց մեկամսյա նախընտրական քարոզարշավը:

Հունիսի 12-ի Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի համընդհանուր ընտրությունների պաշտոնական արդյունքները դեռեւս չհայտարարված, թուրքական որոշ թերթեր շրջանառության մեջ դրեցին «Ազատության» 2-րդ նավատորմիղի նավարկությունը դեպի Գազա հետաձգելու, ապա եւ չեղյալ հայտարարելու լուրերը, ընդգծելով, թե դա «Մարդու իրավունքների եւ ազատությունների մարդասիրական օգնության» հիմնադրամից պահանջել է պաշտոնական Անկարան:

Այս տեղեկությանն արձագանքել էր նաեւ իսրայելական «Հաարեց» թերթը, հիմնավորելով դա Թուրքիայի անմիջական հարեւան Սիրիայում ծայր առած խռովություններով, թե դրանք լրացուցիչ լարվածություն են առաջացրել թուրքական սահմանի երկայնքով:

*Տես էջ 8*

ԱԶԳ

## Ընթացիկ

# Շիրակ Թորոսյանը կողմնակից է Վրաստանի հանդեպ իշխանությունների կոշտ վերաբերմունքի

«Ջավախք» հայրենակցական միության նախագահ, ԱԺ պատգամավոր **Շիրակ Թորոսյանը** երեկ ասուլիսի ժամանակ անդրադարձել է Ամենայն հայոց կաթողիկոսի վրացական այցին, նկատելով, թե հատկապես Ջավախք կաթողիկոսի այցելությունը կարելի է պատմական համարել, որը մեծ բարոյական ազդակ էր ջավախահայերի եւ վրացահայերի համար, մանավանդ որ Ջավախքի հայությունը տասնամյակների ընթացքում այդպիսի բարձրաստիճան մակարդակի այց չի հիշում: Իսկ Վեհափառի` հայեցի, առաքելական հավատով ապրելու հորդորը հատկապես ոգեւորել է դժվար կյանքով ապրող Ջավախքի ժողովրդին` մղելով նրան ավելի ամրանալ եւ ավելի պինդ պաշտպանել իր (հայկական) իրավունքները: Թեեւ նրա կարծիքով վրացական կողմն ամեն ինչ անում էր այցը փակուղի մտցնելու համար` անընդունելի կոմյունիկե (նախագիծ) ներկայացնելով եւ պահանջելով Վրաստանում Հայ առաքելական եկեղեցու գրանցման դիմաց Հայաստանում գրանցել վրաց եկեղեցին: Շ. Թորոսյանն ասում էր, թե Վրաստանում ապրող հայերի եւ Հայաստանում ապրող վրացիների կրոնական խնդիրները համեմատելի չեն, մեզ մոտ ապրող վրացիների խնդիրների կրոնական հենքը բացակայում է. հայկական կողմը միշտ բարձրացնում է Վրաստանում հայկական եկեղեցիների կարգավիճակի հարցը, այս այցի ժամանակ վրացական կողմն էլ, փաստորեն, հանդիպակաց բարձրացրել է Լոռիում գտնվող 5 քաղկեդոնական եկեղեցիների կարգավիճակի, անգամ վերադարձնելու հարցը: Բայց ինչպե՞ս է Վրաստանը հավակնում այդ եկեղեցիներին, եթե անգամ մեկ վրացի չի ապրել այնտեղ, որ եկեղեցի կառուցեր, ու վրացական համայնք էլ չի եղել, Հայաստանի փոքրաթիվ վրացական համայնքն էլ երբեք այդպիսի պահանջ չի դրել, այդ եկեղեցիները հին ժամանակների քաղկեդոնական եկեղեցիներ են: Մի խոսքով` կաթողիկոսի այցը նոր ուժով ցուցանեց Ջավախքում առկա խնդիրները:

Ջավախքի հարցում Հայաստանի քաղաքականությանն անդրադառնալով` Շ. Թորոսյանը նշեց, թե Ջավախքի թեմն անգամ չենք ստեղծել, իսկ ահա Վրաստանը, Տաշիրի վրացական թեմը ստեղծելով, Լոռու 5 քաղկեդոնական եկեղեցիները նույնպես ընդգրկել է այնտեղ: Վրացական կողմի հավակնությունները մատնանշելով` Շ. Թորոսյանը զգուշացրեց, թե հոգեւոր հիմնավորումից հետո կսկսեն խոսել տարածքն իրենցը լինելու մասին, այնպես որ` պետք է վրացական այդպիսի պահանջը մերժել. «Ես բազմիցս ասել եմ, որ Հայաստանի իշխանությունները պետք է ավելի կոշտ դիրքերից հանդես գան Վրաստանի հետ հարաբերություններում», բազմիցս արտահայտած իր այս տեսակետին կաթողիկոսի վրացական այցի հետ կապված` Շ. Թորոսյանը երեկ հավելեց, թե վրացական կողմի անհիմն կոմյունիկեն ներկայացնելու համար էլ պաշտոնական Երեւանն է մեղավոր, քանի որ Վրաստանի հանդեպ չարդարացված մեղմ քաղաքականություն է վարում: Ու հենց այդ պատճառով վրացական կողմը խնդիրներ առաջադրեց, չհիմնավորված կոմյունիկե էր խցկում, որը օրակարգային հարցերը քննարկելիս փակուղի առաջացնելու փորձ էր, քանի որ վրացական ոչ հոգեւոր, ոչ աշխարհիկ իշխանությունները ցանկություն ու կամք չունեն հարց լուծելու ու պարզճակաս միմյանց աչքերի նայելու: Վրաստանի դեսպանի` իրեն Վրաստան մուտք գործելու արգելքի առիթով արած հայտարարության մասին էլ ասաց, թե ճշմարտությունն է ասում նրանց ճակատին, դրա համար էլ չեն թողնում Վրաստան մուտք գործել. «Երկու տարվա ընթացքում չի կարողացել մի փաստ բերել, որ անհավասարակշիռ հայտարարություն եմ արել», ասաց ջավախահայ պատգամավորը:

**Մ. Խ.**

# Հանքավանում բացվել է «Անի Ռեզորթ» հյուրանոցային համալիրը

Հանքավանի «Անի Ռեզորթ» հյուրանոցային համալիրի բացմանը երեկ ներկա է եղել վարչապետ Տիգրան Սարգսյանը: Շնորհավորելով ներկաներին համալիրի բացման առթիվ` վարչապետ **Սարգսյանը** կարեւորել է ամերիկահայ գործարար ՍԴՀԿ Կենտրոնական վարչության ատենապետ Սեդրակ Աճեմյանի ներդրումը Հայաստանում եւ հույս հայտնել, որ դա օրինակելի կլինի սփյուռքահայ մյուս գործարարների համար:

«Անի Ռեզորթը» վերակառուցվել է նախկին «Էրեբունի» հանգստավայրի հիմքի վրա, որի շինարարության ընթացքում կատարվել են ավելի քան 7 մլն դոլարի ներդրումներ:

**Ա. Մ.**




# «Երկխոսությունը բանակցությունների վերածելու փորձերն ուղղակի անընդունելի են»

*1-ին էջից*

Մենք ենք սկսել այդ գործընթացը, եւ դա եղել է ոչ թե որեւէ կողմից ճնշման հետեւանք, ինչպես փորձում են ներկայացնել այդ երկխոսությունից շփոթված առանձին ուժեր, այլ ուղղակի արդյունքն է մեր խոր գիտակցված համոզմունքի: Ես դրական եմ գնահատում Հայ ազգային կոնգրեսի հետ վերջին ամիսների մեր աշխատանքը եւ հույս ունեմ, որ երկուստեք հասկացվածություն կա այն մասին, որ սկսված գործընթացը պետք է համատեղ ուժերով պահպանել ու առաջ տանել: Ստեղծածը քանդելը ամենահեշտն է, քաղաքական հասունությունն արտահայտվում է ստեղծածի վրա ավելացնելու ունակությամբ: Կարծում եմ, եթե կողմերը կարողանան խուսափել մեկքայլանի, լավ չկշռադատված առաջարկներով միմյանց եւ գործընթացը փակուղի տանելու գայթակղությունից, ապա հնարավոր կլինի հաստատուն կերպով առաջ գնալ եւ շատ ավելի մեծ օգուտներ բերել մեր ժողովրդին ու մեր երկրին: Այս տեսանկյունից ամենակարեւոր սկզբունքը հստակ է. վերջնագրերն անթույլատրելի են, վերջնագրերի լեզվով միմյանց հետ խոսելը` ոչ մի տեղ տանող գործելաոճ: Իսկ երկխոսությունը բանակցությունների վերածելու փորձերն ուղղակի անընդունելի են», վերջին օրերին հնչած մի շարք հարցերի պատասխանը խտացրել է նախագահ Սարգսյանն իր ուղերձում` հավելելով, թե «մենք միշտ բաց ենք եղել եւ պատրաստ ցանկացած քննարկման» ու եթե կան քաղաքական ուժեր, որոնք ունեն կոնկրետ ու ողջամիտ առաջարկություններ` «մենք պատրաստ ենք կոնկրետ լուծումների»: Իսկ եթե ՀԱԿ-ին ժողովրդի հոգսերի եւ երկրում առկա բազմաթիվ խնդիրների շարքում սոսկ ընտրություններն են հետաքրքրում, ապա նախագահ Սարգսյանը ցույց է տվել ճանապարհը` ԱԺ նախագահը պատրաստ է անձամբ ընդունել ներկայացուցիչների այդ քաղաքական կառույցի ղեկավար կազմից եւ լսել նրանց, երկրի տնտեսության վերելքին եւ երկրում առկա սոցիալական խնդիրների լուծման առաջարկների դեպքում` վարչապետն անձամբ պատրաստ կլինի ընդունել եւ քննարկել դրանք, հանրապետության նախագահի միջամտությունը պահանջող հարցերի առկայության դեպքում էլ` նախագահի աշխատակազմի ղեկավարը կարող է ընդունել եւ քննարկել. «Իսկ եթե անընդունելի բանակցությունների փոխարեն Հայ ազգային կոնգրեսն իրապես պատրաստ է շարունակել երկխոսությունը երկրի զարգացման ուղեգծին, արտաքին ու ներքին քաղաքականությանն առնչվող կարեւորագույն հարցերի լայն շրջանակում եւ ցանկություն ունի դա իրականացնել միայն հստակ նշանակված մարդկանց միջոցով, ապա կոալիցիոն կուսակցությունների ներկայացուցիչները կարող են նստել քննարկումների սեղանի շուրջը», ասված է նախագահի ուղերձում` նաեւ հավելելով, թե «մենք կարեւոր ճանապարհի վրա ենք, եւ այդ կարեւորությունը միայն այսօրվա համար չէ: Վստահ եմ, եթե սթափությունը չլքի մեզ, մենք կկարողանանք արմատավորել անկախ Հայաստանի համար խիստ կարեւոր քաղաքական նոր մշակույթ»:

Ահա եւ քեզ ՀԱԿ-ի` առաջացնա պատվիրակություն կազմելու պատասխանը` ինչ պատվիրակություն, գնացեք եւ կառույցների հետ աշխատեք, սայլն էլ եզից առաջ դնելիս սայլն է կոտրվելու:

**Մ. Խ.**

# ՀԱԿ-ն արձագանքում է նախագահին

**Հայ ազգային կոնգրեսը Սերժ Սարգսյանի` ընդդիմության հետ երկխոսության վերաբերյալ այսօրվա` հունիսի 17-ի հայտարարության մեջ ձեւակերպումների բազմիմաստություն է տեսնում: «Հայ ազգային կոնգրես-իշխանություն երկխոսության մասին Սերժ Սարգսյանի` հունիսի 17-ի հայտարարության առթիվ հայտնում ենք.**

**Նկատի ունենալով հայտարարության պարունակած որոշակի անհստակությունները եւ առանձին ձեւակերպումների բազմիմաստությունը, Կոնգրեսը նպատակահարմար է համարում դրա գնահատականը տալ` իր կառույցներում քննարկելուց հետո», ասված է ՀԱԿ-ի երեկ երեկոյան տարածած հաղորդագրության մեջ:**

## ՀԱԿԻՐՃ

# Կտանանք տնտ օգնության 90 մեքենաներ Չինաստանից

**Հայաստանի Հանրապետության եւ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարությունների միջեւ ավելի վաղ ստորագրված պայմանագրով Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերված շտապ օգնության գծային մեքենաների, շտապ օգնության ռեանիմոբիլների եւ դրանց օժանդակ սարքավորումների ցանկը երեկ հաստատվեց կառավարությունում: Վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ շտապ օգնության մոտ 9 տասնյակ ավտոմեքենաների ստացումը որակական էական փոփոխություն կառաջացնի բնակչության բուժսպասարկման ոլորտում: Նշվեց, որ վերջին 20 տարվա ընթացքում բուժհիմնարկները դեռեւս այսպիսի համալրում չէին ստացել:**

**Ա. Մ.**

# Հրաչյա Ավանեսյանին տարկետում զինծառայությունից

**Նկատի առնելով ջութակահար Հրաչյա Ավանեսյանի երաժշտարվեստի բնագավառում բացառիկ ընդունակություններն ու խոստումնալից ապագան` կառավարությունը երեկ նրան պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տվեց մինչեւ 2012-ի գարնանային զորակոչը:**

**Ա. Մ.**

# «Արարատբանկը» 4-րդ անգամ արժեթղթեր թողարկեց

**«Նասդաք օէմէքս Արմենիա» ֆոնդային բորսայում երեկ հայտարարվեց «Արարատբանկի» արժեկտրոնային պարտատոմսերի 4-րդ թողարկման մասին: Այս մասին տեղեկացանք բանկի լրատվական ծառայությունից մեզ տրամադրած հաղորդագրությունից:**

**Պարտատոմսերի թողարկման շնորհանդեսի ժամանակ, բանկի գործադիր տնօրենի տեղակալ Դավիթ Հարությունյանը նշել է, որ «Արարատբանկի» նախորդ երեք թողարկումների պարտատոմսերի շրջանառությունն, ընդհանուր առմամբ, կազմել է շուրջ 760 մլն դրամ: Անդրադառնալով նոր թողարկմանը, բանկի փոխտնօրենը նշել է, որ թողարկվել են 25000 նոր անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային պարտատոմսեր` 250 միլոն դրամ ծավալով, 10000 դրամ անվանական արժեքով, 12 տոկոս տարեկան տոկոսադրույքով: Պարտատոմսերի շրջանառության ժամկետը սահմանվել է 2 տարի: Տեղաբաշխումն իրականացվելու է հունիսի 20-ից 15 աշխատանքային օրերի ընթացքում` «Արարատբանկի» գլխամասային գրասենյակի եւ մասնաճյուղերի միջոցով:**

**Ա. Մ.**

# Վթարվել է ԱԺ նախագահի խորհրդական Ալբերտ Հերոյանի մեքենան

**Երեկ Երեւանի Կոմիտաս-Փափազյան փողոցների խաչմերուկում տեղի է ունեցել ավտովթար` միմյանց են բախվել 22-ամյա Սերգեյ Աբրահամյանի վարած «ՎԱԶ-2110» մակնիշի 07 OS 492 համարանիշի եւ 45-ամյա Վարդան Հերոյանի վարած «Հունդայի» մակնիշի 96 SN 999 համարանիշի մեքենաները: Ըստ ականատեսների, որը վերապատմել է վթարի վայր մեկնած ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, «Հունդային» պատկանում է ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի խորհրդական Ալբերտ Հերոյանին: Վթարի հետեւանքով, «ՎԱԶ-2110»-ի վարորդը եւ նրա ուղեւոր 23-ամյա Հովհաննես Աբրահամյանը, ինչպես նաեւ «Հունդայի» մեքենայի ուղեւորներ 48-ամյա Նաիրա Հերոյանը, 41-ամյա Թերեզա Բարսեղյանը, 22-ամյա Անի Պողոսյանը եւ 48-ամյա Արմեն Պողոսյանը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» եւ «Արմենիա» բժշկական կենտրոններ:**

# Զգուշացում` ոչ սառնարանային պայմաններում կրկին միս է վաճառվում

**Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության փոխանցմամբ` երեկ օրվա ընթացքում քաղաքացիները զանգահարել են սննդամթերքի անվտանգության ծառայություն եւ հաղորդել, որ «ԳՈՒՄ-ի շուկայի» հարեւանությամբ գտնվող մսի տաղավարներում կրկին իրականացվում է մսի վաճառք եւ կրկին ոչ սառնարանային պայմաններում: Մինչ գյուղատնտեսության նախարարության վերոնշյալ ծառայությունը կիրականացնի հերթական ստուգումը, ծառայությունը բնակիչներին կոչ է անում ձեռնպահ մնալ ոչ սառնարանային պայմաններում վաճառվող մսի ձեռքբերումից: Ծառայությունն այս կոչով դիմում է քաղաքացիներին` ելնելով անվտանգության նկատառումներից:**

**Ի. Պ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

# Անցուդարձ

## Շնորհավորանքի խոսք հոբելյարին

*Լրագրող Տիգրան Լիլոյանին` իր 50-ամյակի առթիվ*



Այսօր լրանում է լրագրող Տիգրան Լիլոյանի ծննդյան հիսունամյակը:

...Տիգրան Հենրիկի, Ձեր կյանքի ուսումնական, կրթական, զարգացման ճանապարհներն անցել են անվանի ու հին երեք մայրաքաղաքներ` իրար կապող ուղիներով` Փարիզ, Մոսկվա, Երեւան...

Փարիզ, Մոսկվա եւ Երեւան: Առաջինում Ֆրանսիայում ԽՍՀՄ դեսպանությանն առընթեր ութամյա դպրոցի աշակերտ էիք (ուր Ձեր դիվանագետ հոր հետ անց եք կացրել մանկության հինգ տարին), հետագայում` Փարիզում ՏԱՍՍ-ի բաժանմունքի տնօրեն, ապա` լրագրողների պատրաստման ու կատարելագործման կենտրոնի միջազգային դասընթացների ունկնդիր, այնուհետեւ` կրկին ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակից (ի դեպ, երբ 1987 թ. Եվրոխորհրդարանն ընդունում էր Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւը, Լիլոյանը դահլիճում եղած միակ հայաստանցին էր), իսկ այժմ, արդեն Երեւանում, «Հայաստանի Ալյանս ֆրանսէզ» հասարակական կազմակերպության վարչության անդամ:

1986-88 թթ. Մոսկվայում հմտացաք միջազգային լրագրության մեջ, եղաք ՏԱՍՍ-ի օտարերկրյա լրատվության գլխավոր խմբագրության Եվրոպայի երկրների խմբագրության խմբագիր, ավագ խմբագիր:

Իսկ Երեւանը Ձեր տունն է: Այստեղ ծնվեցիք, ավարտեցիք միջնակարգն ու պետական համալսարանը, բռնեցիք լրագրողական աշխատանքի հետաքրքրական ուղին, թղթակցեցիք Արմենպրես պետական լրատվական գործակալությանը, անդամակցեցիք Հայաստանի ժուռնալիստների միությանը, պաշտոնավարեցիք ՀԿԿ Կենտկոմում ու շարունակում եք Ձեր բեղմնավոր լրագրողական գործունեությունը` արդեն քսան տարի անընդմեջ լինելով Հայաստանում ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի սեփական թղթակից: Փաստենք, որ աշխարհում հինգ առաջատար լրատվական գործակալություններից մեկի երեւանյան գրասենյակը մեր նորանկախ պետականության ծնունդ է (այն ստեղծվել է 1991 թ.), իսկ նրա անփոփոխ թղթակիցը Երրորդ հանրապետության փաստացի տարեգիրն է: Երկու տասնամյակից ավելի է, ինչ ամեն օր, օրական քանի-քանի անգամ «Երեւան, ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակից Տիգրան Լիլոյան» ստորագրությամբ տեղեկատվություն է հղվում` երկրիս կյանքի բոլոր ոլորտներում կարեւոր իրադարձությունների, երեւույթների, զարգացումների մասին:

Տիգրան Հենրիկի, ակտիվ քաղաքացիական դիրքորոշումն ու հասարակական տարաբնույթ հանձնառությունները խոսում են Ձեր մարդկային, գաղափարական ու բարոյական նկարագրի օգտին. ՀՀ նախագահի մրցանակների շնորհման հանձնախմբի, ՀՀ սփյուռքի նախարարության եւ ՀՀ մշակույթի նախարարության կոլեգիաների, ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի անդամ, ՀՀ կառավարությանն առընթեր, ՀՀ ոստիկանությանը կից հասարակական խորհրդի պատասխանատու քարտուղար, ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության փոստային վճարման պետական նիշերի հարցերով խորհրդի անդամ, Հայաստանի ֆիլատելիստների միության 2003-06 թթ. նախագահ, Երեւանի պետական եւ Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանների գիտական խորհուրդների, Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի ու համագործակցության հայկական ընկերության վարչության, Երեւանի պատմության թանգարանի մասնաճյուղ` Կարեն Դեմիրճյանի թանգարանի գիտական խորհրդի անդամ:

Այս ամենին հավելենք հոբելյարիդ անսահման նվիրվածությունը Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցուն եւ նրա Մայր աթոռին: Փաստենք նաեւ հարգանքն ու հեղինակությունը, որ Դուք վայելում եք գործընկերների եւ բարեկամների, հասարակայնության շրջանում:

Մասնագիտական անուրանալի վաստակը ուսերիդ, գնահատվեցիք իբրեւ գործի արժանի նվիրյալ, զինվոր ու ծառայող. 2001 թ. պարգեւատրվեցիք Մովսես Խորենացու մեդալով, իսկ 2008 թ. ՀՀ նախագահի կողմից Ձեզ շնորհվեց ՀՀ վաստակավոր լրագրողի պատվավոր կոչում, արժանացել եք բազմաթիվ գերատեսչական ու հասարակական պարգեւների:

Եվ որտեղի՞ց այդքան ուժ ու կորով, անմնացորդ նվիրում մասնագիտությանը, մարդկանց ու հայրենիքին: Համոզված եմ, այստեղ խոսում է հավասարմությունը լուսահոգի ծնողների` լրագրող, դիվանագետ, պատմաբան ու պետական գործիչ Հենրիկ Լիլոյանի եւ ԵՊՀ երկարամյա գիտաշխատող, կենսաբան Սեդա Դանիելյան-Լիլոյանի դաստիարակությանն ու պատգամներին: Այդ նվիրումի եւ սիրո ապացույց հանդիսացող կյանքի բեռով էլ այսօր թեւակոխում եք Ձեր հիսնամյա տարեդարձը: Իսկ հետագան թող նոր սկիզբ դառնա առավել լավ գործերի եւ մտահղացումների համար:

Հոբելյանական այս հիշարժան օրը մաղթում ենք Ձեզ, իմ թանկագի՛ն բարեկամ, նոր ոգեշնչում ու կորով, նվիրական իղձերի կատարում եւ մեծագույն հաջողություններ:

ՖԵԼԻՔՍ ԲԱԽՉԻՆՅԱՆ

*«**Ազգ**»-ի խմբագրությունը 50-ամյակի առիթով ջերմորեն շնորհավորում է իր գործընկեր եւ հեղինակ, դիվանագիտական եւ արարողակարգային հարցերում իր անփոխարինելի խորհրդական, ազգային ու եկեղեցական շատ հարցերում իր համախոհ Տիգրան Հենրիկի Լիլոյանին` բարեմաղթելով նրան ստեղծագործական նոր լիցքեր եւ անձնական-ընտանեկան կյանքի բերկրանք:*

## Օձերն ակտիվանում են հատկապես շոգ եղանակներին

Հայաստանի տարածքում կան 23 տեսակի օձեր, որոնցից միայն 4-ն են թունավոր: Իսկ այդ թունավոր օձերից ամենավտանգավորը գյուրզան ու հայկական իժն են, որոնց խայթելուց հետո մարդը կարող է անգամ մահանալ:

Բնապահպանության նախարարության ներկայացուցիչ **Արամ Աղասյանը** երեկ «Նովոստի» մամուլի կենտրոնում` լրագրողների հետ հանդիպման ժամանակ նախ հերքեց տարածված կարծիքը, թե Հայաստանում օձերի թիվն ավելացել է, ապա նաեւ թյուր համարեց այն կարծիքը, թե վերջին տարիներին օձերն ավելի ակտիվ են դարձել: «Օձերը միջատներ չեն ու միանգամից տասնապատկվել չեն կարող»: Ըստ Արամ Աղասյանի` մարդիկ սկսել են յուրացնել այն տարածքները, որտեղ բնակվում են օձերը: Բնականաբար, եթե նման վայրերում մարդիկ առանձնատներ են կառուցում, ուրեմն պետք է հանդիպեն եւ օձերի: Մյուս բնախոսը` Հայաստանի գլխավոր թունաբան **Միքայել Գաբրիելյանն** էլ անդրադառնալով օձերի խայթոցների դեպքերին` նշեց, որ միայն «Արմենիա» բժշկական կենտրոնն ունեցել է օձերի խայթոցներից տուժած 12 հիվանդ. «Ցավոք, այս տարի 1 մահվան դեպք ենք ունեցել, 2 հիվանդ էլ հիմա պառկած են հիվանդանոցում»: Ինչ վերաբերում է վիճակագրությանը, Միքայել Գաբրիելյանն ասաց, որ այս տարի տուժողների թիվն ավելի շատ չէ. «Ամեն տարի 30-40 տուժող ենք ունենում»: Իսկ ողջ հանրապետության տարածքում, ըստ գլխավոր թունաբանի տվյալների, տարեկան օձերի խայթոցից 110-130 տուժողներ են լինում:

Արամ Աղասյանի փոխանցմամբ` օձերն ավելի ակտիվ են դառնում շոգ եղանակին եւ հատկապես երեկոյան ու գիշերային ժամերին: Պարոն Աղասյանը զգուշացնում է, որ պետք է զգույշ լինել հենց այդ ժամերին: Մեզանում մարդիկ մի վատ սովորություն ունեն. երբեմն փորձում են օձ բռնել, ինչը վտանգավոր է: Մասնագետներն ասում են, որ օձերը երբեք առաջինը չեն հարձակվում, իսկ եթե մարդիկ արշավ կամ էքսկուրսիա են գնում այնպիսի վայրեր, որտեղ օձեր կան, լավ կլինի` կազմակերպիչները նախօրոք իմանան այդ մասին ու զգուշության համար իրենց հետ վերցնեն փայտե ձողեր, սակայն ոչ թե օձեր սպանելու, այլ ձողերով դրանք մի կողմ նետելու համար:

Բնախոսները բնակիչներին խորհուրդ տվեցին օձերի խայթոցից տուժած մարդկանց անմիջապես տեղափոխել հիվանդանոց եւ նման դեպքերում խուսափել բուժակներից ու հեքիմներից: Արամ Աղասյանն ընդգծում է, որ մահվան դեպքերի պատճառը հաճախ լինում է հենց ոչ մասնագիտական մոտեցումը:

Վերջում Միքայել Գաբրիելյանը տեղեկացրեց, որ հիմա բոլոր բուժհիմնարկներն ապահովված են հակաթույնով եւ անմիջապես կարող են օգնություն ցուցաբերել:

Ի. Պ.

ԲՐՅՈՒՍԵԼ

## Հայաստան-ՆԱՏՕ

Պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դավիթ Տոնոյանի գլխավորած պատվիրակությունը հունիսի 17-ին Բրյուսելում` ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում, մասնակցել է 28+Հայաստան ձեւաչափով ՆԱՏՕ-ի քաղաքական եւ գործընկերության կոմիտեի նիստին:

ՊՆ հասարակայնության հետ կապերի վարչությունից հայտնում են, որ նիստի ընթացքում քննարկվել են ՀՀ-ՆԱՏՕ պլանավորման եւ վերանայման գործընթացի գնահատման 2011թ. զեկույցը, ինչպես նաեւ ՀՀ-ՆԱՏՕ Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի նորացված նախագծում ՀՀ պաշտպանության ոլորտին առնչվող նպատակները եւ ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայման արդյունքները: ՆԱՏՕ-ի անդամ 28 երկրները ողջունել են ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայման ավարտը եւ պատրաստակամություն հայտնել աջակցել վերանայման արդյունքում ձեւավորված պաշտպանական բարեփոխումների ուղենիշների իրականացմանը: ՆԱՏՕ-ի անդամ երկրները բարձր են գնահատել նաեւ Աֆղանստանում ՀՀ զորախմբի եռապատկումը, Կոսովոյում խաղաղապահ առաքելության շարունակումը եւ ՀՀ-ՆԱՏՕ պլանավորման եւ վերանայման գործընթացի գործընկերության նպատակների իրականացման գործում գրանցված առաջընթացը: Նիստի ավարտին ՀՀ պատվիրակությունն իր գոհունակությունն է հայտնել նիստի արդյունքների վերաբերյալ եւ մասնակից երկրներին շնորհակալություն հայտնել ՀՀ անվտանգության ապահովման եւ պաշտպանության ոլորտների զարգացման ջանքերին աջակցելու պատրաստակամության համար:

## «Բարձրացնել գերիներին ու անհայտ կորածներին հայրենիք վերադարձնելու աշխատանքների արդյունավետությունը»

ՀՀ պաշտպանության նախարարությունում հունիսի 17-ին տեղի է ունեցել ՀՀ գերիների, պատանդների եւ անհայտ կորածների հարցերով զբաղվող հանձնաժողովի նիստ` հանձնաժողովի նախագահի, պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի գլխավորությամբ: Քննարկվել են 2011 թվականի առաջին կիսամյակում կատարված աշխատանքները եւ առաջիկա ծրագրերը:

ՀՀ գերիների, պատանդների եւ անհայտ կորածների հարցերով զբաղվող հանձնաժողովի անդամները փաստել են, որ գերիներին իրենց հայրենիք վերադարձնելու գործընթացը դանդաղ է ընթանում, քանի որ ադրբեջանական կողմը չի դրսեւորում նույնքան պատրաստակամություն եւ վճռականություն:

Հանձնաժողովի անդամները նշել են, որ անհրաժեշտ է միջազգային կառույցների ուշադրությունը հրավիրել ադրբեջանական իշխանությունների կողմից Կարմիր խաչի միջազգային կոմիտեի Բաքվի գրասենյակի աշխատանքները սահմանափակելու իրողության վրա եւ բարձրացնել գերիներին ու անհայտ կորածներին հայրենիք վերադարձնելու աշխատանքների արդյունավետությունը:

## Հայրենանվեր գործի եւս մեկ օրինակ

**2009 թվականի հոկտեմբերի 20-ը ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի թիվ 1 միջն. դպրոցի տարեգրության հիշարժան օրերից մեկն է: Այդ օրը դպրոցն անվանակոչվեց հայ գրականության եւ մշակույթի երախտավոր, արեւմտահայ բանաստեղծ Վահան Թեքեյանի անունով: Նախաձեռնությունը Թեքեյան մշակութային միությանն էր:**

**Ամերիկայի եւ Կանադայի ԹՄՄ «Ուսուցիչ մը հովանավորէ» ծրագիրն ընդլայնում է իր գործունեության սահմանները` տարբերաբար աջակցություն ցուցաբերելով Վ. Թեքեյանի անունը կրող բոլոր դպրոցներին, այդ թվում` Բերձորի թիվ 1 միջն. դպրոցին: Ծրագիրը կոչված է սատարելու հայրենի ուսուցչին, նպաստելու սերնդի կրթության եւ դաստիարակության սուրբ գործին:**

**Անցյալ տարի` դեկտեմբերին, մեր հյուրընկալ դպրոց այցելեցին թեքեյանցիները` գրող, հրապարակախոս Փիթեր Սուրյանը (Նյու Յորք) եւ գրականագետ, թարգմանիչ Արամ Արքունը, ՀԳՄ վարչության նախագահ Լեւոն Անանյանը եւ ՀԹՄՄ վարչության անդամ, ՀՀ-ում ծրագրի համակարգող Գայանե Մուրադյանը:**

**Այսօր հայրենի ուսուցիչն անշուշտ կարիք ունի բարոյական աջակցության. աջակցություն, որն էլ ավելի կամրապնդի հայ մանկավարժի արժանապատիվ տեղն ու դերը մեր իրականության մեջ: Վերջերս մեր դպրոցին անակնկալ մատուցեցին ԹՄՄ անդամներ Փիթեր Սուրյանը եւ Արամ Արքունը, ովքեր ՀԳՄ վարչության նախագահ Լ. Անանյանի միջոցով մեզ փոխանցեցին որոշակի գումար, որը կծառայի ժամանակակից տեխնիկական միջոցներ ձեռք բերելու նպատակին` ուսումնական գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար:**

ԼՂՀ Քաշաթաղի շրջանի
Բերձոր քաղաքի
Վահան Թեքեյանի անվան
դպրոցի տնօրենություն

## Սյուզան Տերտերյանը` Մ. Նահանգների Գերագույն դատարանի փաստաբան

Գործող ինը դատավորների ներկայությամբ, հանդիսավոր պայմաններում վերջերս Միացյալ Նահանգների Գերագույն դատարանի փաստաբանական խմբի անդամ է դարձել Սյուզան Քուզույան-Տերտերյանը, տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթը:

Մինչ այդ նա արդեն անդամ էր Վերմոնթի դատարանի առաջին ատյանի, ինչպես նաեւ Մասաչուսեթսի փաստաբանական խմբերի:

Սյուզանը Բոստոնի Սուրբ Երրորդության հայկական եկեղեցու նախկին հոգեւոր հովիվ Մամբրե քահանա եւ վաղամեռիկ երեցկին Նվարդ Քուզույանների դուստրն է: Համապատասխանաբար 1981-ին եւ 1984-ին ավարտելով նախ Թաֆթս համալսարանը (Մեդֆորդ, Մասաչուսեթս) եւ հետո Սաֆոլք իրավաբանական ֆակուլտետը (Բոստոն), նա Միդլսեքսում սկսում է աշխատել որպես շրջանային փաստաբանի օգնական: Այնուհետեւ անձնական գրասենյակ է բացում Քեմբրիջում (Մասաչուսեթս), եւ զբաղվում կտակների, անշարժ գույքի եւ այլ գործերի վարույթներով:

Հ. Ծ.

# Լեհահայերը կարոտ են հայկական երգի, երաժշտության եւ խոսքի

*Լեհաստանում բնակվում է 40.000 հայ, սակայն հայկական համայնք գոյություն չունի*

Լեհաստանում բնակվող հայերի թիվը չի գերազանցում 40.000-ը: Մայրաքաղաք Վարշավայում բնակվում է շուրջ 30.000 հայ: Լեհահայերը առանձնահատուկ են ոչ միայն գործունեությամբ, այլեւ կենսակերպով ու մտածելակերպով:

Հայերը Լեհաստանում բնակվում են ավելի քան 600 տարի: Զարմանալի ու ցավալի է, սակայն վեցդարյա կենսագրություն ունեցող հայերը վերջին շուրջ 200 տարիներին Լեհաստանում համայնք չեն ձեւավորել: Մինչեւ վերջին տարիները Լեհաստանում չէին գործում հայկական դպրոցներ: Ի տարբերություն այլ երկրների՝ Հայ առաքելական եկեղեցին այստեղ չի գործում:

Հայերի կարգավիճակն ու գործունեությունը մեկ բառով նկարագրել անհնար է՝ անկազմակերպ, ցաքուցրիվ, միմյանցից հեռու:

Լեհաստանում ապրող հայերին կարելի է բաժանել 3 տարբեր խմբերի:

Մի խումբը Լեհաստանում 600 տարվա պատմություն ունեցող հայերն են, ովքեր իրենց անվանում են հայկական ծագմամբ լեհեր: Նրանք ժամանակի ընթացքում ձուլվել են, ընդունել կաթոլիկություն, խոսում են բացառապես լեհերեն եւ միայն Լեհաստանի անկախության հռչակումից հետո են սկսել արմատները զննել, քննել, պարզել ծագումը:

Երկրորդ խումբը 90-ականների ցուրտ ու մութ տարիներին Լեհաստան արտագաղթած հայերն են: Նրանք խոսում են հայերեն, կոչվում նոր լեհահայեր, հայ առաքելականներ են: Տարիներ շարունակ վերոնշյալ երկու խմբերի միջեւ ընդհանուր ոչինչ չի եղել: Գործել են առանձին, ընդհանուր հետաքրքրությունների շրջանակն էլ, ցավոք, նեղ է եղել:

Լեհաստանում գործող հայկական կազմակերպությունների թիվը գերազանցում է մի քանի տասնյակը: Նրանք տարբեր գաղափարախոսությունների կրողն են ու տարբեր խնդիրների լուծմանն են ծառայում:

Հայկական ծագմամբ լեհերի հիմնադրած կազմակերպությունների հիմնական առաքելությունը հիշողությունների պահպանումն է՝ Լվովում թողած իրենց տունը, եկեղեցիներն ու գերեզմանները: Հայաստանը նրանց քիչ է հետաքրքրում:

Նոր լեհահայերի հիմնադրած կազմակերպությունները հիմնականում զբաղվում են հայկական մշակույթի տարածմամբ: Այդ կազմակերպությունները փորձում են Լեհաստանում ծնված հայ երեխաներին կապել հայկական արմատներին:

Վերոնշյալ երկու խմբի հայերը տարիներ շարունակ ապրել են կողք կողքի, սակայն օտարացած: Հենց այդ օտարումն էր պատճառը, որ լիարժեք հայկական համայնք Լեհաստանում չէր ձեւավորվել: Բացը լրացնելու համար անցյալ տարի ստեղծվել է Լեհաստանի հայերի կոնգրես՝ նպատակ հետապնդելով միավորել բոլոր հայերին: Կոնգրեսի առաջին նիստին մասնակցել է Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը՝ կարեւորելով լեհահայերի միասնականությունն ու համախմբվածությունը:

### Վարշավայում կարելի է լսել շարականի ձայնը

**Մարգարիտա Երեմյանը** Վարշավայում ապրում է 1997-ից: Վարշավայի համալսարանի արեւելագիտության ֆակուլտետում դասավանդում է հայերեն լեհ ուսանողների համար:

Մի քանի տարվա համառ ջանքերից հետո 2003-ին նրան հաջողվեց հիմնադրել առաջին կիրակնօրյա հայկական դպրոցը, որտեղ հայ մանուկներին սովորեցնում են հայոց լեզու, գրականություն, պատմություն:

Այսօր դպրոցի աշակերտների թիվը գերազանցում է մի քանի տասնյակը:

«Այդ մի քանի դասաժամն էլ օգնում է երեխային, որ նա չձուլվի, ճանաչի իր պատմությունը, երկիրն ու ժողովրդին», ասում է Երեմյանը:

Շաբաթական մեկ անգամ www.radio.net ինտերնետային ռադիոյով «Հայկական ռադիոհաղորդում» ծրագրի շրջանակներում Երեմյանը հայերեն լեզվով հաղորդումներ է վարում: «Այդ հաղորդումները նույնպես օգնում են, որ հայերենը չմոռացվի»:

2010 տարին նոր լեհահայերը համարում են հաջողված:

«Բազմաթիվ խնդրանքներն ու նամակները՝ ուղղված Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ին, արդյունք տվեցին, եւ այժմ Վարշավայում ունենք հոգեւոր հովիվ՝ հայր Տաճատը, որը պատարագ է մատուցում: Առաջին պատարագը մատուցվել է սեպտեմբերին: Այժմ եկեղեցական բոլոր տոները նշում ենք եկեղեցում: Կնունքներ են անցկացնում, հարսանիքներ, ինչը չձեւավորված համայնքի համար հսկայական նշանակություն ունի: Եկեղեցին, հավատքը այն մեծ ուժն է, որ օտարության մեջ միավորում է հայերին», ասում է Մարգարիտա Երեմյանը:

Վարշավայում առաքելական եկեղեցու բացակայության պատճառով հայր Տաճատը պատարագները մատուցում է ուկրաինական կաթոլիկ եկեղեցում, սակայն նոր լեհահայերը ցանկություն են հայտնել՝ ուկրաինական եկեղեցու տարածքի վարձակալությունից հետո, մինչ սեփական եկեղեցին ունենալը, պատարագ մատուցել եւ աղոթել ուղղափառ եկեղեցում. պահանջն ու ցանկությունը հստակ է եւ արդարացված. լեհահայերը մոմ վառելու մեծագույն պահանջ են զգում:

Վարշավայում Հայաստանի ու հայերի մասին պատմող հուշարձան դժվար թե գտնեք: Միակ խաչքարը Լեհաստանում Հայաստանի դեսպանատան բակում է:

Արդեն մի քանի տարի ապրիլի 24-ին եւ դեկտեմբերի 7-ին հայերը հավաքվում են խաչքարի մոտ, հարգում զոհերի հիշատակը, երգում Կոմիտաս:

Լեհաստանում ապրող հայերը պատմում են, որ Հայաստանի հետ կապ գրեթե չկա: Հայկական որեւէ պարախումբ, թատերախումբ կամ երգչախումբ շրջագայությամբ Լեհաստան չի եկել: Եթե գալիս են՝ միայն լեհական կողմի նախաձեռնությամբ, եւ քանի որ կազմակերպված համայնք չկա, միջոցառումների մասին հայերը չեն իմանում: Մարգարիտա Երեմյանը հիշում է, որ ինտերնետից են իմացել, որ Ջիվան Գասպարյանը մասնակցել է ազգային նվագարաններին նվիրված փառատոնին: «Կազմակերպված համայնք չկա, որպեսզի գումար տրամադրի եւ որեւէ երգչի կամ խմբի մենահամերգ կազմակերպվի: Հայկական երգի, երաժշտության ու խոսքի կարոտ ենք մնացել: Բացը լրացնելու համար հաճախ լեհահայերը մեկնում են Չեխիա կամ Գերմանիա՝ հայկական որեւէ միջոցառման մասնակցելու: Վարշավայում որեւէ պարային խումբ կամ թատրոն նույնպես չունենք եւ մեզ հաճախ անզոր ենք զգում, որ չենք կարողանում Հայաստանն իրական գույներով ու պատկերով ներկայացնել օտարներին», ասում է Երեմյանը:



Նա հույս ունի, որ կոնգրեսի աշխատանքներով ժամանակի ընթացքում համայնքի խնդիրները կլուծվեն: Առայժմ գլխավորը համախմբվելն է:

Լեհաստանում անլեգալ բնակվող հայերի թիվը նույնպես շատ է: Նրանց վիճակը սարսափելի է՝ ապրում են վախի մթնոլորտում, սարսափահար, անհանգիստ: Շատերն անգամ հայկական անձնագիր չունեն եւ օգտագործում են Սովետական Միության անձնագիր:

Անլեգալ բնակվող հայերը հիմնականում աշխատում են շուկաներում, ի տարբերություն Հայաստանի՝ Լեհաստանում բացօթյա առեւտուրն արգելված չէ:

Նրանց ապագան սեւ գույներով է ներկայացնում: Ապագան Լեհաստանում չեն տեսնում, սակայն չեն էլ պատկերացնում իրենց կյանքը Հայաստանում:

Նրանք հույսով սպասում են, որ կլինի համաներում, կստանան փաստաթղթեր ու կապրեն օրինական կյանքով՝ առանց վախի եւ անհանգստության:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վարշավա-Երեւան

# Պոլսո պատրիարքարանը շքանշան է շնորհել Շիշլիի քաղաքապետին եւ դոկտ. Զավեն Եկավյանին

**Հայաստանյայց առաքելական եկեղեցու Պոլսո պատրիարքարանը առաջին անգամ մի մահմեդականի շնորհել է իր բարձրագույն պարգեւը՝ պատրիարք Հովհաննես Կոլոտի անվան շքանշանը: Պատրիարքարանի հիմնադրման 550-ամյակի տոնակատարության նախաշեմին ոսկե շքանշանը հանձնվել է Կ. Պոլսի շրջաններից մեկի՝ Շիշլիի քաղաքապետ Մուստաֆա Սարըգյուլին:**

**Նույն բարձրագույն պարգեւին արժանացել է նաեւ Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հայ համայնքների բաժանմունքի տնօրեն դոկտ.** Զավեն Եկավյանը:

Պարգեւները հանձնվել են Սուրբ Մարիամ Աստվածածին մայր տաճարում պաշտոնական պատարագի ավարտից հետո, հաղորդում է Բլագովեստ-ինֆո գործակալությունը: Թուրք քաղաքապետին պարգեւը շնորհվել է «Ստամբուլի հայ համայնքի զարգացման գործում ներդրած զգալի ավանդի, սոցիալական, կրթական նախագծերին աջակցելու եւ հայկական տաճարների վերականգնման նախագծերին օժանդակելու համար»:

Շքանշանը հանձնելիս պատրիարքի տեղապահ **Արամ արքեպիսկոպոս Աթեշյանն** ընդգծել է, որ «քաղաքապետի օգնությունը եղել է ոչ միայն նյութական, այլեւ բարոյական, որի շնորհիվ հայերը, իբրեւ կրոնական փոքրամասնություն, մոռացան խտրականության մասին»: Ի պատասխան՝ **Մուստաֆա Սարըգյուլն** ասել է. «Քեզի շատ կը սիրեմ»:

Ինչ վերաբերում է դոկտ. Զ. Եկավյանին, ապա Արամ սրբազանն իր խոսքում ընդգծել է նրա մեծ հոգատարությունը ստամբուլահայ ազգային-կրոնական հաստատությունների, պատրիարքության ազգային-եկեղեցական առաքելության նկատմամբ:

Պ. Ք.

«ԱՅՐՎՈՂ ԱՉՔԵՐ»

# Ստամբուլի լուսանկարչական ցուցահանդեսը ցեղասպանության տաբու թեմային է անդրադառնում

*Ստորեւ «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթից թարգմանաբար ներկայացվող ֆրանսիացի լրագրող* ***Գուիյոմ Պերիեյի*** *հոդվածը նաեւ տպագրվել է «Մոնդ» հայտնի պարբերականում եւ ապա՝ «Գարդիան ուիքլի» հանդեսում:*



**Ստամբուլի մշակութային կենտրոններից մեկում՝ Դեպոյում 96 սեւ ու սպիտակ լուսանկարներ են կախված անբիծ պատերից, մեկ լուսանկար Օսմանյան կայսրությունում 1915-ի ապրիլի 24-ին սկսված Հայոց ցեղասպանությունից անցած յուրաքանչյուր տարվա համար:**

**«Այրվող աչքեր» ցուցահանդեսը հինգ մասի է բաժանված, համապատասխան այն հինգ վիլայեթների, որոնք նախկինում հայկական էին հռչակված (Վան, Էրզրում, Բիթլիս, Դիարբեքիր եւ Խարբերդ), բայց այժմ Արեւելյան Թուրքիայի մաս են կազմում: Այդ վիլայեթները իրենց վրա են կրում ոճրագործության հետեւանքները, որն արդեն 15 տարի ուսումնասիրում է ֆրանսահայ լուսանկարիչ Անտուան Ագուճյանը՝ ցեղասպանությունից փրկվածների թոռը:**

**Իր բազմաթիվ ճանապարհորդությունների ընթացքում նա եղել է ոչ միայն Մերձավոր Արեւելքի հայկական համայնքներում, այլեւ անցել է Թուրքիայից դեպի Սիրիայի դեզորյան անապատները ձգվող բռնագաղթի եւ կոտորածների բոլոր վայրերով՝ հայտնաբերելու համար հիշողություններ, որոնք ճնշվել ու հերքվել են, բայց երբեք չեն ջնջվել ու մոռացվել:**

**Վերապրողների ԴՆԹ-ի մեջ «փորագրված» ցեղասպանության այս հիշողությունները այժմ իրենց արտահայտությունն են գտել Ագուճյանի լուսանկարներում: «Ժխտումը նպաստում է, որ ցեղասպանության թեման այժմեական մնա, իսկ լուսանկարչական ճշմարտությունը երեւան է հանում ամեն ինչ», ասում է նա:**

**Նրա աշխատանքները, որոնք լույսի խաղերի եւ հակասությունների վրա են հիմնված, մեզ առաջնորդում են դեպի հայկական ոգու եւ մշակույթի տառապանքները: Մութ երկնքի տակ ցեղասպանության զոհերի ոգիները հաճախակի այցելում են Անատոլիայի գյուղերը, ավերված եկեղեցիներն ու սարսափից քարացած համայնքները:**

**Ագուճյանը պատմում է իր ժողովրդի բռնագաղթի, զանգվածային տեղահանության եւ նահատակության մասին, նաեւ 2007-ին սպանված լրագրող Հրանտ Դինքի թաղման մասին:**

**Մահը բույն է դրել բոլոր վերապրողների հոգում, բայց հույսի մի փոքրիկ շող դեռեւս մնում է: «Այրվող աչքերը» թուրք հանրությանը ներկայացնելով՝ Ագուճյանին հաջողվել է շատ ավելին անել, քան սոսկ ցուցահանդես բացելը: Նա նպաստել է մի քանի տարի առաջ սկսված մերձեցման, կամուրջ կապելու գործընթացին: Թուրքական պետության համար ցեղասպանությունը դեռեւս տաբու թեմա է, բայց քաղաքացիական հասարակությունը սկսել է վերանայել իր դիրքորոշումը:**

**«Այդ գործընթացը սկսել է ավելի արագ զարգանալ Հրանտ Դինքի մահվանից հետո, եւ այս ցուցահանդեսում իր պատշաճ տեղն է գրավում այդ կոնտեքստում: Մենք մի քանի մշակութային միջոցառումներ արդեն ունեցել ենք Թուրքիայում՝ նվիրված Հայկական հարցին, Օսման Քյոքերը շատ կարեւոր մի ցուցահանդես կազմակերպեց՝ ցույց տալով ժամանակին հրապարակված փոստային բացիկներ, որոնք հստակորեն վկայում են, որ 1915-ից առաջ հայերն ապրել են այստեղ եւ հետո անհետացել», ասում է (թուրք) գրող Ահմեդ Ինսելը:**

**Որոշ ժամանակ առաջ Դինքի հիմնած հայկական համայնքի «Ակօս» թերթը տպագրել էր Ագուճյանի լուսանկարներից մի քանի նմուշներ: Դրանից հետո Ագուճյանը Ստամբուլ էր մեկնել՝ հանդիպելու Օսման Կավալայի հետ, որ հայ-թուրքական մշակութային փոխանակումների ջատագովներից է: Միասին նրանք որոշել էին կազմակերպել այս ցուցահանդեսը Դեպոյում:**

**Ֆրանսիայում 2006 թվին հրատարակված Ագուճյանի լուսանկարների մի լավ հավաքածու-ալբոմ («Les Yeux Brulants») արդեն իսկ Թուրքիայում լույս է տեսել այս առթիվ երկու՝ թուրքերեն եւ հայերեն լեզուներով, որպես Քյոքերի ձեռնարկած պատմական գրքերի մատենաշարի մի մաս:**

**Ցուցահանդեսը լուսանկարչի համար նաեւ իր որոնումների գագաթնակետն է: «Շատերը խենթություն էին համարում, անիմաստ մի բան, բայց ես ավելի եմ համոզվում, որ սա սոսկ հայկական խնդիր չէ, այլ ավելի լայն՝ ճշմարտությունը որոնող ամեն մեկի խնդիրն է», ասում է նա:**

**Ապրիլի 24-ի առիթով Ստամբուլում գրողների եւ մարդու իրավունքների պաշտպանների կազմակերպած միջոցառումները հաստատեցին Ագուճյանի համոզմունքը: «Հուսով եմ, որ սա ճանապարհ կհարթի նաեւ այլ վտարված հայերի առաջ, ովքեր ցանկանում են աշխատել այստեղ: Բայց թեման դեռ շատ զգայուն է Թուրքիայում: Որոշ մոլի ազգայնականներ փորձեցին հրմշտուքով ցուցահանդեսի դահլիճ թափանցել, բայց ոստիկանությունը նրանց բավական անվտանգ հեռավորության վրա կարողացավ պահել», ասաց նա:**

Թարգմ. Հ. Ծ.

# Ադրբեջանի դեմոկրատական հանրապետություն. չգոյության պատմությունը (2)

Ինչպես արդեն գրել է «**Ազգ**»-ը, 1994թ. արտգործնախարար Հասան Հասանովի խմբագրությամբ Բաքվում լույս է տեսել Ալիմարդան-բեկ Թոփչիբաշեւի «Դիվանագիտական գրառումներ» գիրքը: Մեզ հայտնի չէ, թե Հասանովի խմբագրական միջամտությունը որքանով է ազդել Թոփչիբաշեւի գրառումների վրա. բացառված չէ, որ բնագիրն ունի այլ նրբերանգներ եւս, սակայն նույնիսկ այն տեսքով, որ ներկայացված են, «Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության առաջին դիվանագետի» նամակներն ու մի շարք հանդիպումների սղագրությունները ժամանակակից ուսումնասիրողին կարող են զգալի նյութ տրամադրել: Մասնավորապես խիստ ուշագրավ է 1918թ. դեկտեմբերի 16-ի թվակիր նամակը, որ Թոփչիբաշեւը հղել է իր «կառավարության վարչապետ» Ֆաթալի-խան Խոյսկիին: Թոփչիբաշեւը գրում է.

«Ոչ մի պատասխան ստացած չլինելով տարբեր ժամանակներում Բաթումից եւ Կոստանդնուպոլսից Ադրբեջանի նախարարների խորհրդի նախկին նախագահ Ֆաթալի-խան Խոյսկիին գրած իմ նամակներին, կասարելապես անտեղյակ լինելով Ադրբեջանում, որին ես ներկայացնելու պատիվ ունեմ Թուրքիայի մայրաքաղաքում, տիրող գործերի վիճակին, ստիպված էի ինձ մոտ քարտուղար հանդիսացող Մուստաֆա-բեկ Վեքիլովին ուղարկել Ելիզավետպոլ (Գյանջա) կամ Բաքու, քանի որ չգիտեմ, թե որտեղ է այժմ գտնվում Ադրբեջանական հանրապետության կառավարությունը»:

Ուշադրություն դարձրեք. նամակը գրված է 1918 թ. դեկտեմբերի 16-ին, այսինքն՝ Ադրբեջանի հռչակումից յոթ ամիս անց, բայց «առաջին դիվանագետը, որ պատիվ ունի այդ երկիրը ներկայացնել» Կոստանդնուպոլսում, հստակ չգիտի, թե որտե՞ղ է գտնվում «կառավարությունը»՝ Գանձակո՞ւմ, թե՞ Բաքվում, ո՞վ է «նախարարների խորհրդի նախագահը»: Նամակը նա հղել է Ֆաթալի-խան Խոյսկիին, բայց վերջինիս անվանում է «նախարարների խորհրդի նախկին նախագահ», ինչից հստակ եզրակացվում է, որ «դեսպանը կառավարության հետ» որեւէ կապ չի ունեցել: Իսկ դա իր հերթին վկայում է, որ «կառավարություն» որպես այդպիսին չի գործել, քանի որ անտրամաբանական է, որ որեւէ լուրջ կառավարություն որեւէ երկիր դեսպան ուղարկի եւ մոռանա նրա գոյությունը:

Այո, միայն այդ դեպքում է, որ Թոփչիբաշեւը կարող էր դժգոհել. «Քանի որ նախորդ նամակներում ես մանրամասնորեն գրել եմ այստեղի գործերի վիճակի եւ մեր հանդեպ թուրքական կառավարության վերաբերմունքի մասին, ինչպես եւ մի շարք խնդրանքներ եւ առաջարկություններ եմ արել, որոնք առ այսօր մնում են անպատասխան եւ անկատար (ընդգծումը մերն է- Վ.Ա.), ապա սույն նամակում ես ստիպված եմ ձեռնպահ մնալ շատ մանրամասնություններից եւ սահմանափակվել ավելի առաջնահերթ եւ կարեւորագույն հարցի տեղեկությամբ, որը վերաբերում է ժողովուրդների առաջիկա խաղաղության կոնգրեսին Ադրբեջանի մասնակցությանը՝ նպատակ ունենալով հասնել մեր ինքնուրույնության ճանաչմանը եւ գլխավորը՝ Ռուսաստանից անկախությանը»:

Կանգ առնենք. Թոփչիբաշեւը չի օգտագործում «անկախություն» բառը, երբ խոսում է «ժողովուրդների առաջիկա կոնգրեսին Ադրբեջանի մասնակցության» մասին: Հասանովի խմբագրությամբ գիրքը լույս է տեսել ռուսերեն: Տվյալ դեպքում ռուսերենն ունի բնագրի արժեք: Թոփչիբաշեւը գրում է. «добиться признания нашей самостоятельности»: Քիչ հետո նա, իհարկե, օգտագործում է «անկախություն» բառը, բայց տվյալ կոնտեքստում այն ավելի շատ «անջատում» է նշանակում, քան՝ ինքնիշխանություն՝ и главное-независимости от России:

Այսպիսով, «դեսպանի» նպատակն է «կառավարությանը» համոզել, որ վերջինս չպնդի Ադրբեջանի կատարյալ անկախության ճանաչումը, այլ նպատակ ունենա խաղաղության կոնգրեսում հասնել «ինքնուրույնության եւ, գլխավորը, Ռուսաստանից անջատված լինելու ճանաչմանը»: Ընդ որում, նա վստահ չէ, որ իր «կառավարությունը» դրան կարող է հասնել միայնակ: Նա պարզաբանում է. «Միակ հնարավոր ճանապարհը, որ ինձ թվում է իրականության ներկա ստեղծված պայմաններում, դա ադրբեջանցիների, վրացիների եւ հայերի համատեղ քայլերն են»: STOP. սա արդեն թուրքական դիվանագիտությունն է խոսում՝ Թոփչիբաշեւի բերանով:

Այդպես մտածել եւ առաջարկել ստիպում են «իրականության ստեղծված պայմանները»: Այսինքն՝ Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի կրած պարտությունը եւ միջազգային հարաբերություններում Օսմանյան կառավարության կատարյալ մեկուսացվածությունը: Թոփչիբաշեւը վստահ չէ՝ իր նամակը հասցեատիրոջը կհասնի՞, թե՞ ոչ, դրա համար էլ «մանրամասնություններից ձեռնպահ է մնում» եւ ուղղակի հասկացնում, որ Թուրքիան անզոր է ճանաչելու Ադրբեջանի «ինքնուրույնությունը» եւ չի կարող այլ երկրների հետ հարաբերություններում էլ ինչ-որ բան անել: Այս իրավիճակում մնում է մի ճանապարհ՝ խաղաղության կոնգրեսին ներկայանալ վրացիների եւ հայերի հետ միասին: Թոփչիբաշեւը, սակայն, նույնիսկ այդ որոք ծանր, իր համար թերեւս անելանելի վիճակում հավատարիմ է մնում ազգայնականությանը.

«Որքան էլ որ այդ ազգությունների (ադրբեջանցիների, վրացիների եւ հայերի-Վ. Ա.) ազգային-քաղաքական իդեալները տարբեր լինեն, այսօր նրանց բոլորի անկախությունը անառարկելիորեն կապված է ընդհանուր աշխատանքի եւ խաղաղության կոնգրես ընդհանուր մուտք գործելու հետ, որը, ինչպես հարկ է լինում այստեղ համոզվել, միայն այդ տեսքով կցանկանա լսել մեզ եւ կթեքվի նախկին ռուսական պետությունից մեր անջատումը եւ, հետեւաբար, մեր ինքնուրույնությունը ճանաչելուն»:

Այնուհետեւ արդեն ստիպված բացատրում է. «Ում հետ էլ որ առիթ է ստեղծվում հանդիպելու՝ թուրքական մինիստրներ, սկսած Սադր Ազամից (վարչապետից-Վ.Ա.), օտարերկրացիներ, հրապարակախոսներ, մեր հանդեպ տրամադրված բոլոր մարդիկ, որոնց թվում հարկ է ընդգծել նախկին ծովային մինիստր եւ Թուրքիայի հետ զինադադարի կնքման ժամանակ թուրքական պատվիրակության ղեկավար Ռաուֆ բեյին, բոլորը այդ առթիվ համակարծիք են՝ գտնելով, որ կովկասյան ժողովուրդների եւ Հյուսիսային Կովկասի համադաշնության կազմավորումը մեր ինքնուրույնությանը հասնելու միակ ճիշտ ճանապարհն է: Եվ, ըստ իս, դա առայժմ միակ հնարավոր ելքն է»: Այսինքն, դա ոչ թե առհասարակ է նպատակ, այլ ընդամենը՝ որպես «իրավիճակից միակ ելք»:

Իսկ ո՞րն է իրավիճակը: Շատ պարզ մի բան. ոչ մի երկիր Ադրբեջան անվանված «պետությունը» ճանաչելու մտադրություն չունի: Բայց առկա է Վրաստանի եւ Հայաստանի անկախությունը խաղաղության կոնգրեսում ճանաչելու իրական հնարավորություն: Եվ Թոփչիբաշեւի «դիվանագիտական տաղանդը փայլատակում է»: Իր անհասցե եւ անգլուխ «կառավարությանը» նա հորդորում է. «Անհրաժեշտ նյութերի հավաքումն ու ադրբեջանական պատվիրակության կազմավորումն, ըստ իս, պետք է ավարտվի մեկ ընդհանուր՝ ադրբեջանցիներից, վրացիներից եւ հայերից կազմված պատվիրակության կազմավորումով, եւ դրան հարկ է ձեռնամուխ լինել այժմ իսկ»:

Դիտարժան է, որ «Կովկասյան համադաշնություն ստեղծելու» գաղափարը Թոփչիբաշեւը քննարկել է նաեւ Հայաստանի պատվիրակության ղեկավար Ավետիս Ահարոնյանի հետ 1919 թ. հունվարի 16-ին: Ըստ սղագրության, «Բերա-պալաս» հյուրանոցում Թոփչիբաշեւն ընդունել է Ահարոնյանին, որը Կոստանդնուպոլիս էր հասել՝ մեկնելու Փարիզ: Հարցին, թե ի՞նչ է մտածում Ահարոնյանը «Կովկասյան համադաշնության» մասին, վերջինս պատասխանել է. «Ներկայումս դա շատ դժվար կլինի»: Սա, ըստ էության, մերժում էր:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

# Սաադ Հարիրին տարագրվել է

Լիբանանի նախկին վարչապետ Սաադ Հարիրին արդեն 1 շաբաթ Փարիզում է եւ ապրում է իբրեւ տարագիր: «Լիբերասիոն» թերթի տվյալներով, ԱՄՆ-ը եւ Սաուդյան Արաբիան նրան խորհուրդ են տվել չվերադառնալ հայրենիք, որտեղ, ըստ հիշյալ երկրների գաղտնի ծառայությունների, նրա կյանքին վտանգ է սպառնում:

Ամերիկյան եւ սաուդյան հատուկ ծառայությունները կարծում են, որ Սիրիայի վարչակարգը կարող է կազմակերպել Սաադ Հարիրիի սպանությունը, որպեսզի Լիբանանում շիա-սուննի միջդավանանքային հակամարտություն հրահրի:

Այդ դեպքում համաշխարհային հանրության ուշադրությունը կշեղվեր Բաշար ալ Ասադից եւ Սիրիայում խռովության ճնշման գործողություններից: Լիբանանյան աղբյուրները նշում են, որ մոտավորապես մեկ շաբաթ առաջ Սաադ Հարիրին լուրջ ահազանգ էր ստացել Բեյրութի օդանավակայանի ճանապարհին:

Սաադի հայրը՝ նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրին սպանվել էր 2005-ին Բեյրութում: Արեւմուտքը այդ սպանությունը վերագրում է «Հզբոլլահին» եւ Սիրիայի հատուկ ծառայություններին:

Անցյալ շաբաթ Լիբանանում կազմված նոր կառավարությունը սիրիամետ է եւ ենթակա է «Հզբոլլահ» շարժմանը: «Հզբոլլահի» առաջնորդ Սայեդ Հասան Նասրալլահը իր ելույթում պարզ հասկացրել է, որ Բաշար ալ Ասադի վարչակարգի անկումը կարող է Սիրիայում հարուցել ընդհանուր քաղաքացիական պատերազմ, որի արձագանքները կհասնեն մինչեւ Սաուդյան Արաբիա:

**Պ.Ք.**



# ԱՄՆ-ը պատրաստ է գտնել եւ սպանել ալ Զաուահիրիին

**Ամերիկացի բարձրաստիճան զինվորականները պատրաստակամ են գտնելու եւ ոչնչացնելու Այման ալ Զաուահիրիին, որը Ուսամա բեն Լադենի սպանությունից հետո դարձել է «Ալ Ղաիդայի» նոր առաջնորդը: Շտաբների պետերի միացյալ կոմիտեի ղեկավար, ծովակալ Մայք Մալլենը հայտարարել է, որ ԱՄՆ-ը ալ Զաուահիրիի հետ կվարվի «նույն կերպ, ինչ բեն Լադենի հետ»: Վերջինս մայիսի լույս 2-ի գիշերը սպանվեց Պակիստանում՝ իր առանձնատան վրա ամերիկացիների ձեռնարկած գրոհի ժամանակ:**

**Ֆրանսպրեսը մեջբերում է Պենտագոնի ղեկավար Ռոբերտ Գեյթսի հայտարարությունը, որ նա արել է «Ալ Ղաիդայի» առաջնորդի պաշտոնում ալ Զաուահիրիի նշանակման կապակցությամբ: Գեյթսի խոսքերով, ալ Զաուահիրին առաջնորդի ձիրքով եւ գործողությունների իրականացման փորձով զիջում է բեն Լադենին:**

**Այման ալ Զաուահիրիի՝ «Ալ Ղաիդայի» առաջնորդ ընտրվելու մասին հայտնի էր դարձել հունիսի 16-ին: «Ազգն» այդ մասին գրեց երեկվա համարում:**

**ՀԴԲ-ն ալ Զաուահիրիին մեղսակից է համարում 1998-ին Քենիայում եւ Տանզանիայում ամերիկյան դեսպանատների պայթեցումներին (սպանվեց 200 մարդ): ԱՄՆ իշխանությունները 25 մլն դոլար պարգեւավճար են խոստանում Այման ալ Զաուահիրիի տեղը հայտնողին:**

**Պ. Ք.**

# Իտալիան արտաքսեց Լիբիայի դեսպանին

**Իտալիայի արտգործնախարարությունը հայտարարել է երկրից Լիբիայի դեսպանի արտաքսման մասին, հաղորդում է Ֆրանսպրեսը:**

**ԱԳՆ պաշտոնական հաղորդագրության մեջ ասվում է, որ դեսպանի առաքելությունն ավարտված է, քանի որ Լիբիայի ժողովրդի հալածանքների պատճառով Մուամմար Քադդաֆիի վարչակարգը կորցրել է օրինականությունը:**

**Դեսպանը պարտավոր է Իտալիայից հեռանալ տասնօրյա ժամկետում: Նրանից բացի, երկրից հեռանալու կարգադրություն են ստացել դեսպանատան երեք ուրիշ աշխատակիցներ՝ «դիվանագիտական կարգավիճակին անհարիր գործունեության համար»:**

**Ներկայումս Իտալիան մեկն է աշխարհի սակավաթիվ երկրներից, որոնք լիբիացի ապստամբների Ազգային անցումային խորհուրդը պաշտոնապես ճանաչել են որպես Լիբիայի միակ օրինական իշխանություն:**

# Eurocopter-ը ստեղծել է թեւավոր ուղղաթիռ



Եվրոպական ուղղաթիռաշինության Eurocopter ընկերությունը մշակել է X3 անվանակոչված թռչող սարք, որի ցուցադրական թռիչքները տեղի են ունենում Ֆրանսիայի հարավում՝ Պրովանսում: Նոր ուղղաթիռն առաջին անգամ լայն հանրությանը կներկայացվի Լը Բուրժեի (Փարիզ) ամենամյա ավիաշոուի ժամանակ, որը սկսվում է հունիսի 20-ին:

X3-ը թեւավոր ուղղաթիռ է, որը ուղղահայաց վերսլացքի ու վայրէջքի հնարավորությունները միավորում է գրեթե օդանավային արագության հետ:

Փորձարկող ինժեներ Դոմինիկ Ֆուռնիեն BBC-ի թղթակցի հետ զրուցելիս ասել է, որ տվյալ ուղղաթիռը «վերսլացքից հետո ձեռք է բերում թեւավոր թռչող սարքի հատկանիշներ»:

X3-ը իր դասի ամենաարագընթաց սարքն է. մայիսին փորձնական թռիչքներից մեկի ժամանակ այն սլացել է ժամում 430 կմ արագությամբ:

Փորձարկող օդաչու Էրվե Ժամեյրոնի խոսքերով, X3-ի օդաչուները եւ ուղեւորները թռիչքից ստանում են նոր զգացողություններ, քանի որ, ի տարբերություն ավանդական ուղղաթիռի, սարքը հորիզոնական ընթացքը շարունակելով արագացնում եւ դանդաղեցնում է թռիչքը:

Սովորական ուղղաթիռից հետո կառավարվող X3-ը կարող է ուղղաթիռից 50 տոկոսով արագ տեղաշարժվել, ասում է Eurocopter ընկերության ղեկավար Լուտց Բերտլինգը: Նա պնդում է, որ նոր սարքի գլխավոր արժանիքը արդյունավետությունն է:

Eurocopter-ն ուզում է վաճառքի հանել սովորական ուղղաթիռից 50 տոկոսով արագ թռչող, բայց միայն 25 տոկոսով շատ վառելիք ծախսող սարք: Բերտլինգի խոսքերով, X3-ը կարող է էլ ավելի արագ թռչել, բայց այդ դեպքում կաճի վառելիքի ծախսը:

Ուղղաթիռների նոր նմուշների մշակման ծրագրով տարեկան ծախսվում է 1 մլրդ եվրո: Ծրագիրը նախատեսված է 6 տարվա համար:

Eurocopter-ը փորձում է ստեղծել վառելիքի ծախսի առումով շատ խնայողական նմուշներ: Այդ նպատակով պետք է օգտագործվեն հիբրիդային՝ դիզելային-էլեկտրական շարժիչներ:

Կմշակվեն նաեւ անօդաչու թեւավոր ուղղաթիռներ, որոնցով հնարավոր կլինի իրականացնել նաեւ ուղեւորափոխադրումներ:

Նմանօրինակ թռչող սարքերը կարելի է օգտագործել խոշոր քաղաքների միջեւ, ասենք՝ Լոնդոնից Բրյուսել ուղեւորներ փոխադրելիս կամ հենց խոշոր քաղաքներում, որտեղ ուղղահայաց վերսլացքի ու վայրէջքի հնարավորությունը թույլ կտա ժամանակ խնայել եւ ազատվել օդանավակայան մեկնելու անհրաժեշտությունից:

Թեւավոր ուղղաթիռների գնորդներ կարող են դառնալ նաեւ նավթ ու գազ արդյունահանող ընկերությունները, որպեսզի մասնագետներին արագորեն հասցնեն հորատման աշտարակներ եւ հարթակներ: Նման հաճախորդների համար անչափ կարեւոր է թռչող սարքի շահութաբերությունը:

X3-ի արդյունավետությունն ու բազմանպատակային կիրառությունը պետք կգան նաեւ փրկարարական եւ ռազմական գործողությունների ժամանակ:

ԱԶԳ



ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ

# Հայաստանը Պրահայի Քվադրիենալեում

## *Հունիսի 18-ը նաեւ հայկական տաղավարի օրն է*




Հունիսի 15-ին Պրահայի Ազգային պատկերասրահի Ժամանակակից արվեստի թանգարանում բացված 12-րդ Քվադրիենալեն, որը Եվրոպայի ամենահայտնի միջազգային թատերական փառատոնն է՝ նվիրված բեմական ձեւավորմանը, առաջին անգամ մասնակցեց Հայաստանը: Հունիսի 18-ին կեսօրից հետո պաշտոնապես կներկայացվի նաեւ հայկական տաղավարը, որի 20 քմ տարածքում տեղ են գտել Երեւանի Մնջախաղի պետական թատրոնի եւ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի չորս ներկայացումների բեմանկարչական հենքերը: Ինչպես նշեց Պրահայի Քվադրիենալեի հայաստանյան ազգային համադրող **Նելլի Բարսեղյանը**, իրենք սուղ ֆինանսական միջոցներով աշխատել են ներկայացնել «Թատրոնը հավերժ ընթացք է» սկզբունքը, եւ գլանափաթեթով պարուրելով տաղավարը, այն վերածել են մի ենթադրյալ ճանապարհի՝ իրար կարված լուսանկարների միջոցով: Այդպես էլ արտահայտվել է տաղավարի հիմնական թեման՝ «Մաքրելով հիշողության փոշին»: Հայկական տաղավարի մասնակցությանը աջակցել է Հայաստանի մշակույթի նախարարությունը: Իհարկե, եթե




ֆինանսական օգնությունը մեծ լիներ, հնարավոր է հայկական ներկայությունն ավելի մեծ տարածք եւ հետաքրքիր ցուցադրություն ընդգրկեր: Ամեն դեպքում, հաճելի է, որ Հայաստանն առաջին անգամ հնարավորություն ունի ներկայանալու Չեխիայի այս տարվա ամենամեծ մշակութային իրադարձությանը, որն իր մասշտաբներով գերազանցում է նույնիսկ ամիսներ առաջ կազմակերպված գրքի միջազգային ցուցահանդեսին: Մեր տաղավարը ճաշակով ձեւավորել են բեմանկարիչներ Նելլի Բարսեղյանն ու Լիլիթ Ստեփանյանը: Հայկական տաղավարի ներկայացմանը ներկա կգտնվի նաեւ Չեխիայում Հայաստանի գործերի ժամանակավոր հավատարմատար Դավիթ Ղուկասյանը: Ու քանի որ նման միջոցառումները նաեւ լավ միջոց են մեր երկրի խոհանոցն ու զբոսաշրջային հնարավորությունները ցույց տալու համար, վերջում կտրվի նաեւ փոքրիկ հյուրասիրություն Հայաստանից բերված գինիներով, անուշահամ չրերով, հայկական «Արարատ» կոնյակով եւ Չեխիայում արտադրվող հայկական «Մառլենկա» թխվածքով, ներկաներին կբաժանվեն Հայաստանի մասին պատմող լրատվական գրքույկներ:

Նշենք, որ Քվադրիենալեին այս տարի մասնակցում է 62 երկիր, իսկ այցելուների թիվը ակնկալվում է, որ կանցնի 40 հազարը: Մեր հարեւան երկրներից Քվադրիենալեին մասնակցում են Վրաստանը եւ Թուրքիան:

Քվադրիենալեն ներառում է բեմական ձեւավորման բոլոր ոլորտները՝ բեմանկարչություն, զգեստների, լուսային եւ երաժշտական ձեւավորում: Այս փառատոնի շրջանակներում կազմակերպվում են նաեւ բազմաթիվ ներկայացումներ, սիմպոզիումներ, կլոր սեղաններ եւ վարպետության դասեր: Այն տեղի է ունենում Պրահայի մի քանի մշակութային օջախներում եւ ներառում է հագեցած ծրագիր: Ի դեպ, Հայաստանի տաղավարի հարեւանությամբ Լիտվայի ցուցադրությունն է, ուր դրված է «Լիտվական բեմական ձեւավորման ցեղասպանությունը» պաստառը: Լիտվացի նկարիչներն այդպես են արտահայտում իրենց բողոքը սեփական կառավարության եւ մշակույթի նախարարության հանդեպ: Իսկ ընդհանրապես զարմանալու եւ հիանալու շատ տաղավարներ կան: Հնարավորության դեպքում, մինչեւ հունիսի 26-ը այցելեք Պրահայի Քվադրիենալե:

Հ.Ա.

Պրահա

# Նշանակում

Նախկին տնօրենի պաշտոնազրկման դեմ բողոքի ընդհանուր մթնոլորտում ՀՀ մշակույթի նախարարը երեկ Ազգային գրադարանի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակել Տիգրան Զարգարյանին: Վերջինս 1994 թ.-ից ի վեր գրադարանային ավտոմատացման եւ հարակից արդիականացման աշխատանքներ է տարել հանրապետության մի շարք գիտական հաստատություններում:

# Անտերության տերը



Վերնագրումն այս սոսկ նրբաբանության ու նմանաձայնության համադրման ոճական հնարք չէ, քանի որ նրանում բովանդակված գաղափարական հենքն այժմյան բարքերին նետված ձեռնոց է նաեւ: Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում ներկայացված Հրանտ Մաթեւոսյանի «Տերը» եւ «Ծառերը» վիպակների կոնստամինացիոն բեմավորումը, իրավի, վերարտադրում է մերօրյա իրականությանը նույնպես բնորոշ չարախնդության, ստրկամիտ վախկոտության, ստորաքարշության պատրաստակամության ու եսակենտրոն բարոյալքվածության արժեհամակարգային աղետը: Ու այս ամենի հետ չհաշտվող՝ անտերության մատնվող հայրենիքին տեր կանգնելու համար ճիգ ու ջանք չխնայող, Ռոստոմ (Վաքինյան) Սարգսյան-Մամիկոնյանը իր անզիջում պայքարի պատճառով համագյուղացիների թշնամանքի թիրախն է դարձել: Մի խոսքով՝ նախրամիտ հասարակության եւ սկզբունքային անհատի միջեւ ծագող բարոյահոգեբանական կոնֆլիկտ, որը չարի հակակրելիությունը գոտեւորող հանգուցալուծում է ստանում: Բայց իր պարզությամբ հանդերձ, ծմակուտյան «Ստոկմանի» պատմությունն այնպիսիններից չէ, որի բեմականացմանը ամեն ռեժիսորի գեղարվեստաէսթետիկական համակարգի հզորությունը կբավարարեր:

Մաթեւոսյանական բառ ու բանի, ինքնահատուկ մթնոլորտից սերող ռիթմի ու խորքային ենթատեքստերի, բեմական ընթերցման «առոգանությունը» չի կարող օրգանական լինել, եթե չունես հարուստ կենսափորձ, մասնագիտական հասունություն, եթե ինքդ զուրկ ես կոլորիտայնությունից եւ, եթե կյանքի սխալական ընթացքի հետ կռվի մեջ չես: Ավելի պարզ՝ վերը հիշատակված համամասնությունների բացակայության դեպքում հեղինակի շնչից կտրված բեմադրապատում կստացվի: Առավելեւս, որ գործ ունես ոչ բեմի համար ստեղծված գրվածքի հետ: Սույն տեսանկյունից ներկայացման ռեժիսոր եւ գլխավոր դերակատար Ա. Էլբակյանը, դեռեւս 2007 թ. Վ. Սարոյանի մի քանի գործերի միաձուլումից կազմելով «Չե՞ս պարի ինձ հետ» բեմապատումը, ապացուցեց, որ տեսարաններ կառուցելու վարպետությամբ, նկարչական ու երաժշտական լուծումների կենսականությամբ, եւ ամենակարեւորը՝ իր բնատուր ներքնատեսությամբ, ի զորու է բեմում հեղինակին հատուկ աշխարհազգացողություն ստեղծել: Եվ այստեղ էլ՝ «Տերը» ներկայացման սկզբից իսկ, տիրում է գյուղական աշխարհի մթնոլորտը՝ բնավ չխախտելով բնականության զգացողությունը: Ավելին, ներազգային առումով տեղային առանձնահատկությունները ավելի քան ամբողջական են դառնում Աննա եւ Արմեն Էլբակյանների խաղում առկա ներաշխարհային դրսեւորումներով: Հատկապես կանանց խոտհունձի տեսարանում ցուցաբերած կերպարային համոզչականությունը, որն, անշուշտ, խոսում է դերասանուհու խորունկ մտածողության մասին: Իսկ ինքնասեր անտառապահի կերտման մեջ ուշագրավ է Արմեն Էլբակյանի պլաստիկական վճիռը. ինքնիշխան քայլվածքն ու շարժուձեւը մեզ հուշում են՝ բեմում մեկն է, ով չի հաճոյանում իշխանություն ունեցող Քաջ Նազարանման մանր ու միջին խազեիններին: Թեեւ խոսքային գործողության ընթացքում, երբեմն խորաբնակ ձայնի հնչողություն արտաբերելը Խորեն Աբրահամյանի խաղակերպի նմանակման տպավորություն էր թողնում: Բացի այդ, մտահղացումից ոչ մի գնով չհրաժարվելու թերացում է եզրափակիչ տեսարանը: Արտի կաթվածին հաջորդող Ռոստոմի խոսքերն ինքնին վիզուալ ֆինալ են հրավիրում, ինչն էլ չի ուշանում. լուսային թարթի ներքո «անհայրենիքների» ոհմակի առջեւ ընկած է ինքը: Վե՛րջ: Նշյալ տեսարանից հետո մնացյալն անհարկի է՝ դպրոցական թատրոնի սիրողականության մերձակայք տանող ավելորդություն: Այդուհանդերձ, ներկայացումն առանց երկմտելու կարելի է համարել հաջողված եւ գաղափարախոսության դիտանկյունից հասարակության համար խիստ ուսանելի:

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Թատերագետ

# Եվա Մարկոսյանը փայլեց մենահամերգում



Երեւանի Պ. Ի. Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի մեծ դահլիճը ջերմորեն ընդունեց ու ծափահարեց իր 6-րդ դասարանի սան Եվա Մարկոսյանին: 11-ամյա աղջնակը, որը սովորում է անվանի երաժիշտ Ալդոնա Փահլեւանյանի դասարանում, մենահամերգին նվագեց Բեթհովենի, Խաչատրյանի, Մենդելսոնի, Սարասատեի, Պագանինիի եւ Կրեյսլերի շատ բարդ ստեղծագործությունները: Այդ անուշիկ, գեղեցկադեմ աղջնակի նրբիկ մատներն այնպես վարժ էին շարժվում ջութակի վրա, որ թվում էր, թե Եվան ոչ միայն նվագում է, այլ ապրում երաժշտությամբ ու հուզմունք պարգեւում ներկաներին: Եվան դեռ մանկուց սիրել է երգել ու պարել: 2 տարին չբոլորած նա մոտեցել է դաշնամուրին, ոտքերի թաթերի վրա բարձրացել, որ հասնի ստեղնաշարերին ու սկսել է տմբտմբացնել իր մատիկներով, բոլորին ստիպել իրեն լսել: Հետո Եվան ավելի շատ սիրել է երգել, իսկ երբ 6 տարեկանում հեռուստատեսությամբ դիտել է մի երաժշտի՝ ջութակ նվագելիս, այդ պահից խնդրել է, որ իրեն ջութակ գնեն: Ծնողները չեն մերժել առաջնեկի խնդրանքը եւ նրան տարել են Ռոմանոս Մելիքյանի Ումր-Շատի անվան երաժշտական դպրոց: Եվ այդ օրվանից փոքրիկ Եվան օրվա մեծ մասը չի բաժանվել իր հավատարիմ գործիքից՝ ջութակից: 9 տարեկանում մասնակցել է Գյումրիում Կոմիտասի 140-ամյակին կայացած մրցույթ-փառատոնին եւ ստացել կրտսեր մասնակցի դիպլոմ: 4-րդ դասարանում, ընդամենը 10-11 տ. Եվան առաջին անգամ իր մենահամերգն է տալիս եւ արժանանում երաժշտագետների գովասանքին: Այնուհետեւ տեղափոխվելով Պ. Ի. Չայկովսկու անվան երաժշտական դպրոց, նրան նկատում եւ հրավիրում են ՅՈՒՆԻՍԵՖ-ի մանկական կամերային նվագախումբ (գեղղեկ եւ դիրիժոր՝ Սերգեյ Սմբատյան)՝ առաջին ջութակահարների խմբում նվագելու: Նվագախումբը հանդես է եկել Եվրոպայում («Աշնանային հեքիաթ» մրցույթին՝ գրավելով Գրանպրի եւ 1-ին տեղ), բազմիցս՝ Երեւանում եւ մարզերում:

«Ազգի» հետ զրույցում **Եվա Մարկոսյանը** շնորհակալություն էր հայտնում իր սիրելի ուսուցչուհուն՝ Ալդոնա Փահլեւանյանին եւ ծնողներին, որոնք ջանք ու եռանդ չեն խնայում, որ Եվան էլ ավելի կատարելագործվի իր ընտրած մասնագիտության մեջ:

3 օրից Եվան կրկին նվագախմբի հետ հանդես կգա տոնական համերգային ծրագրով: Ոգեւորված եւ գոհ էր ուսուցչուհին՝ տկն **Փահլեւանյանը**, որը «**Ազգին**» ասաց. «Եթե 10 բալից ավելի գնահատական լիներ՝ ես միանշանակ կտայի Եվային: Դեռ 5-րդ դասարանում Եվան նվագեց կոնսերվատորիայի 1-ին կուրսի ծրագիրը եւ թռիչքային կարգով տեղափոխվեց 6-րդ դասարան: Իսկ այն կոմպոզիտորների ստեղծագործությունները, որոնք այսօր կատարեց Եվան, շատ բարդ էր: Հենց այդ ծրագիրը նվագում են կոնսերվատորիան ավարտողները: Եվայի մոտ տեխնիկական դժվարություններ չկան, եւ ես նրա հետ շատ ավելի բարդ ու խտացված ծրագրով գործեր եմ պատրաստում, քանի որ նրա մեջ տեսնում եմ ապագա երաժշտին ու կմաղթեմ, որ լավագույն երաժիշտների մոտ շարունակի ուսումնառությունը: Այժմ մենք պարապում ենք Մոցարտի կոնցերտի, Արամ Խաչատրյանի կոնցերտի ուսուցման վրա եւ վստահ եմ, որ Եվան կկարողանա մեծերի պես հաղթահարել այդ բարդ գործերը: Եվային միջազգային մրցույթներն են սպասում, եթե շարունակի այսպես քրտնաջան աշխատել, միայն թե ավելի լավ գործիքի վրա:

Եվայի ելույթը բարձր գնահատեցին ու նոր բեմեր մաղթեցին երաժշտագետ Աշոտ Ղարիբյանը (Նոր Հաճընի արվեստի դպրոցի տնօրեն), ներկաները ու նաեւ դասընկերները: Հուսանք, որ հետագայում Եվա Մարկոսյանի անունը կհնչի ավելի մեծ բեմերից:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Մարզական

## Արթուր Աբրահամը Հայաստան է ժամանել ամուսնանալու եւ հարազատ մարզադպրոցին օգնելու

### Անվանի բռնցքամարտիկի հետ հերթական հանդիպումն «Ուրբաթ» ակումբում

Հերթական անգամ Հայաստան է ժամանել պրոֆեսիոնալ հայ անվանի բռնցքամարտիկ, միջին քաշային կարգում աշխարհի նախկին չեմպիոն **Արթուր Աբրահամը**, որը երեկ «Ուրբաթ» ակումբում հանդիպեց լրագրողներին: Ինչպես տեղեկացրեց Արթուրը, այս անգամ հայրենիք է եկել 2 նպատակով՝ ամուսնանալու եւ Վլադիմիր Ենգիբարյանի անվան բռնցքամարտի մարզադպրոցին 100 հազար եվրոյի օգնություն ցուցաբերելու համար:



ՖՈՏՈԼՈՒՐ

Արթուրն առանձնապես չցանկացավ խոսել իր ընտրյալի մասին, նշելով միայն, որ ամուսնության գործը ընթացքի մեջ է, հարսնացուն էլ սովորական, համեստ հայ աղջիկ է: Ինչ վերաբերում է օգնությանը, ապա Արթուրը նշեց, որ դա իր հոգու պարտքն է հարազատ մարզօջախին ինչ-որ կերպ աջակցելու: Ժամանակին Արթուրը 4 տարի մարզվել է այդ մարզադպրոցում եւ այժմ որոշել է հանդերձանք ու մարզագույք նվիրել պատանի բռնցքամարտիկներին: Օգնության մի մասն արդեն Երեւանում է, մյուսը տեղ կհասնի երեքշաբթի:

Անդրադառնալով վերջին շրջանում ունեցած անհաջողություններին, Արթուրը նշեց, որ համապատասխան եզրահանգումներ է կատարել ու կփորձի առաջիկայում չկրկնել այդ սխալները: Մասնավորապես Անդրե Ուորդի հետ մենամարտում Արթուրը 4-րդ ռաունդից հետո տակտիկական սխալ թույլ տվեց՝ զգալիորեն նվազեցնելով ակտիվությունն ու ավելի շատ պաշտպանվելով: Արթուրը դա բացատրեց նրանով, որ գիտակցում էր, որ ԱՄՆ-ում միավորներով Ուորդին հաղթելը գրեթե անհնարին էր, ուստի ցանկանում էր հարմար պահ որսալ եւ նոկաուտի ենթարկել մրցակցին: Սակայն ցավոք, դա նրան չհաջողվեց:

Վերջին մի քանի պարտությունները բնավ էլ չեն վհատեցրել Արթուրին: Նա մտադիր է շարունակել ելույթները 2-րդ միջինքաշային կարգում եւ այստեղ էլ չեմպիոնական գոտիների արժանանալ: Իսկ դրա համար նա պետք է սկսի վարկանիշային մենամարտերից: Դրանցից առաջինը նախատեսում է անցկացնել մոտ 3 ամսից: Առայժմ կոնկրետ մրցակիցը հայտնի չէ: Այս ուղղությամբ Արթուրի մենեջերները զբաղվում են:

Արթուրը նաեւ նշեց, որ ԱՄՆ-ում մենամարտելը շատ դժվար է՝ հաշվի առնելով եվրոպացիների համար կլիմայափոխվելու դժվարությունները, ժամային գոտիների տարբերությունը, ինչու չէ՝ նաեւ կողմնակալ մրցավարությունը: Ինքն էլ առանձնապես չէր ցանկանա Super Six մրցաշարի վճռորոշ հանդիպումն ԱՄՆ-ում անցկացնել, սակայն պայմանագիր ուներ կնքած: Եվ եթե չկատարեր պայմանը, կորակազրկվեր 2 տարով:

Ինչպես Վախթանգ Դարչինյանը, Արթուր Աբրահամն էլ Հայաստանում բռնցքամարտի դպրոց հիմնելու ծրագրեր ունի: Ընդ որում մարզադպրոցին կից նա ցանկանում է հիմնել նաեւ լեզվի դպրոց, որտեղ բռնցքամարտիկները կուսուցանեն անգլերեն ու գերմաներեն, ինչը շատ անհրաժեշտ է պրոֆեսիոնալներին մարզական կարիերայում: Այս ծրագիրն Աբրահամը մտադիր է իրականացնել մի քանի տարի անց, երբ կավարտի մարզական իր կարիերան:

Արթուրը դրական գնահատեց Հայաստանում բռնցքամարտի զարգացման տեմպերը, նշելով, որ շատ լավ բռնցքամարտիկներ կան, որոնք հետագայում կարող են տեղափոխվել պրոֆեսիոնալ ռինգ: Պարզապես հայ բռնցքամարտիկների համար հարկ է պայմաններ ստեղծել, որպեսզի ավելի շատ մրցաշարերի մասնակցեն ու մրցակցային փորձ ձեռք բերեն: Ինչ վերաբերում է սիրողականից պրոֆեսիոնալ ռինգ տեղափոխվելուն, ապա ըստ Արթուրի, դա պայմանավորված է յուրաքանչյուր բռնցքամարտիկի անհատական հատկանիշներով: Բացի այդ շատ կարեւոր է մենեջերի, պրոմոութերի ընտրությունը: Մի խոսքով, պրոֆեսիոնալ ռինգում հաջողություններ ակնկալելու համար պետք է որ ամբողջ թիմը համատեղ աշխատի:

Արթուր Աբրահամը մոտ մեկ ամիս կմնա Հայաստանում: Արթուրի խոստովանությամբ Հայաստանն իր համար իսկական դրախտ է, հացն ու ջուրը, ժողովրդի վերաբերմունքը, շփումն ընկերների ու հարազատների հետ աննկարագրելի ջերմություն են հաղորդում իր հոգուն: Նախկինի պես Արթուրը համագործակցում է «Յունիբանկի» հետ, որն իր առաջին հովանավորն է: Նա խոսեց նաեւ Եվրոտեսիլի մասին: Ինչպես հայտնի է, Արթուրը նկարահանվել էր Էմմիի «Բում-բում» երգի տեսահոլովակում: Ըստ նրա, Էմմիի եզրափակիչ փուլ չմտնելը մեծ անակնկալ էր իր համար: Նա գտնում է, որ Եվրոտեսիլում եւս քաղաքականությունը մեծ դեր է խաղում, մեծ գումարներ են շրջանառվում:

Արթուր Աբրահամը հույս հայտնեց, որ պրոֆեսիոնալ ռինգում վերջին շրջանում կրած անհաջողություններն արդեն հետեւում են մնացել ու առաջիկայում իրեն կհաջողվի հաղթանակներով կրկին ուրախություն պարգեւել բռնցքամարտի սիրահարներին թե Հայաստանում, թե Գերմանիայում:

## «Ուեմբլին» 2013-ին կրկին կհյուրընկալի չեմպիոնների լիգայի եզրափակչի մասնակիցներին



Լոնդոնի «Ուեմբլի» մարզադաշտը, որտեղ մեկ ամիս առաջ իսպանական «Բարսելոնը» հաղթելով «Մանչեսթր Յունայթեդին», նվաճել էր չեմպիոնների գավաթը, 2013-ին կրկին կհյուրընկալի չեմպիոնների լիգայի եզրափակչի մասնակիցներին: Նման որոշում է կայացվել ՈՒԵՖԱ-ի գործկոմի նիստում: Ինչպես հայտարարել է ՈՒԵՖԱ-ի նախագահ Միշել Պլատինին, այդ քայլը պայմանավորված է այն բանով, որ 2013-ին Անգլիայի ֆուտբոլի ֆեդերացիան նշելու է հիմնադրման 150-ամյակը: Կարծում ենք, որ Անգլիան պետք է գոհ լինի ՈՒԵՖԱ-ի նման որոշումից:

Ինչպես հայտնի է, 2007-ին Լոնդոնի «Ուեմբլի» մարզադաշտը հիմնովին վերանորոգվեց: Կառուցվեց 90 հազար նստելատեղով ժամանակակից մարզադաշտ, որում 2-րդ անգամ է անցկացվելու չեմպիոնների լիգայի վճռորոշ հանդիպումը: Իսկ եթե հաշվի առնենք հին մարզադաշտում անցկացված չեմպիոնների գավաթի եզրափակիչ հանդիպումները, ապա «Ուեմբլին» արդեն 7-րդ անգամ է հյուրընկալելու վճռորոշ խաղի մասնակիցներին:

2013-ի Եվրոպայի լիգայի եզրափակիչը կանցկացվի Ամստերդամի «Ամստերդամ Արենա» մարզադաշտում: Այս մարզադաշտը կառուցվել է 1996-ին եւ այդ ժամանակից ի վեր ոչ մի վերանորոգման չի ենթարկվել: Չնայած դրան, մարզադաշտն այսօր էլ Հոլանդիայի ամենաժամանակակից մարզակառույցներից մեկն է:

1998-ից սկսած Եվրոպայի Սուպերգավաթի հանդիպումն անցկացվում է Մոնակոյի «Լուի 2-րդ» մարզադաշտում: 2013-ին այն կանցկացվի Պրահայի «Էդեն» մարզադաշտում, որի տրիբունաներն ընդամենը 21 հազար հանդիսական կարող են տեղավորել:

Ֆուտբոլի Եվրոպայի 2016-ի առաջնության կազմկոմիտեի առաջարկով խաղերի անցկացման համար որպես պահեստային մարզադաշտեր են ընտրվել Սենտ Էթիենի եւ Թուլուզայի խաղադաշտերը: Դա պայմանավորված է այն փաստով, որ 2016-ին Ֆրանսիայում կայանալիք Եվրոպայի առաջնությունում 16-ի փոխարեն հանդես են գալու 24 հավաքականներ, որի հետեւանքով 31 խաղի փոխարեն տեղի է ունենալու 51 հանդիպում:

# ՇԱԽՄԱՏ

## Արթուր Գաբրիելյանն առաջատարների թվում է

**Վորոնեժի շախմատի մրցաշարի 5-րդ տուրը հաջող էր Հայաստանի շախմատիստների համար: Նրանցից երեքը հաղթեցին, մեկ պարտիա ավարտվեց ոչ-ոքի:**

**Զավեն Անդրեասյանը սեւերով հաղթեց Միխայիլ Անտիպովին: Գեւորգ Հարությունյանը պարտության մատնեց Սերգեյ Սավիցկուն, իսկ Նելլի Աղինյանն առավելության հասավ Գրիգորի Օպարինի նկատմամբ: Միակ ոչ-ոքի արդյունքը գրանցվեց Լիլիթ Գալոյանի եւ Լեոնիդ Գոլովինի մրցավեճում:**

**Ռուսաստանում բնակվող հայազգի շախմատիստներից հաջող է հանդես գալիս հատկապես Արթուր Գաբրիելյանը, որը սեւերով հաղթելով Ռուսլան Յանդարբիեւին, վաստակեց 4 միավոր: Արթուրը Անդրեյ Դեւյատկինի, Ալեքսեյ Ալեքսանդրովի, Դմիտրի Կոկարեւի, Եվգենի Կալեգինի, Անդրեյ Ժիգալկոյի եւ Եվգենի Շապոշնիկովի հետ գլխավորում է մրցաշարային աղյուսակը: Ժիգալկոն հաղթեց Կոնստանտին Թառլեւին, Կոկարեւ-Ալեքսանդրով, Շապոշնիկով-Դեւյատկին, Ռահմանով-Թունիկ պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի:**

**Ռուսաստանցիներ Գեւորգ Հայրապետյանն ու Էդուարդ Բարսամյանը պարտություններ կրեցին համապատասխանաբար Ալեքսանդր Ժուրիխինից եւ Ռասեթ Զիատդինովից: Հայաստանցի շախմատիստներից լավագույն արդյունքն ունեն Զավեն Անդրեասյանն ու Գեւորգ Հարությունյանը, որոնք վաստակել են 3,5-ական միավոր: Լիլիթ Գալոյանի օգտին գրանցված է 3 միավոր, Նելլի Աղինյանն ունի 2,5 միավոր:**

## Ջերմուկում արդյունավետ խաղը շարունակվում է

**Ջերմուկում ընթացող Կարեն Ասրյանի շախմատի հուշամրցաշարի 2-րդ տուրն էլ աչքի ընկավ բարձր արդյունավետությամբ: Կայացած 35 պարտիաներից 29-ում հաղթեց մրցակիցներից մեկը: Նախորդ տուրում հաջողության հասած շախմատիստները մրցեցին միմյանց հետ: Այդ պարտիաների ավարտից հետո միանգամից 12 շախմատիստներ 2-ական միավորով գլխավորեցին մրցաշարային աղյուսակը: Նրանց թվում են հայ շախմատիստներ Արա Մինասյանը, Աշոտ Նադանյանը, Ռուսաստանը ներկայացնող Նիկիտա Մատինյանը, Հովհաննես Գաբուզյանը, Տիգրան Քոթանջյանը եւ Հովիկ Հայրապետյանը: Քոթանջյանը հաղթեց Արման Հայրապետյանին, Գաբուզյանը պարտության մատնեց Եվգենի Գլեյզերովին, Հայրապետյանը առավելության հասավ Արտաշես Մինասյանի նկատմամբ:**

**Հետաքրքրական պայքարում անցավ Նիկիտա Մատինյանի եւ Սամվել Տեր-Սահակյանի մրցավեճը: Երկու պատանի շախմատիստների մրցավեճում հաղթեց Մատինյանը: Միջազգային վարպետ Աշոտ Նադանյանը պարտության մատնեց Գրիգոր Դիլանյանին:**

**Արտերկրի շախմատիստներից երկրորդ հաղթանակները տոնեցին Կոնստանտին Շանավան, Միխայիլ Ուլիբինը, Դանիլ Դուբովը, Շոթա Ազալաձեն, Սոպիո Գվեթաձեն եւ Նինո Բացիաշվիլին: Վերջինս հաղթեց մրցաշարի ամենաբարձր վարկանիշն ունեցող Արման Փաշիկյանին: Շանավան առավելության հասավ Պույա Իդանի նկատմամբ, Ուլիբինն էլ հաղթեց Վահե Բաղդասարյանին: Մեծ հետաքրքրություն էր ներկայացնում վերջերս գրոսմայստերի կոչմանն արժանացած երկու շախմատիստների՝ Տաթեւ Աբրահամյանի եւ Դանիլ Դուբովի մրցավեճը: Սպիտակներով խաղացող հայ շախմատիստուհին պարտություն կրեց: Առաջին կես միավորը վաստակեց մրցաշարի ամենատարեց մասնակիցներից Էդուարդ Մնացականյանը՝ հաշտություն կնքելով մինչեւ 18 տարեկանների Հայաստանի չեմպիոնուհի Մարիա Գեւորգյանի հետ: Մրցաշարի մյուս տարեց մասնակիցը՝ Ռաշիդ Աբրահամյանը, որն առաջին տուրում ազատ էր խաղից, պարտվեց Արամ Պլուզյանին:**



ՖՈՏՈԼՈՒՐ

## Պատանիները կամային հաղթանակ տոնեցին

**Երեկ Հանքավանում ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 16 տարեկանների հավաքականը ստուգողական 2-րդ հանդիպումն անցկացրեց Վրաստանի իր հասակակիցների հետ: Ի տարբերություն առաջին խաղի, որում դարպասներն անառիկ էին մնացել, այս անգամ ֆուտբոլիստներն աչքի ընկան արդյունավետ գոլերով:**

**Առաջին խաղակեսում վրացի ֆուտբոլիստներին հաջողվեց բացել հաշիվը: Ընդմիջումից հետո մեր պատանիները կամային հատկանիշներ դրսեւորեցին ու հաղթանակ տոնեցին 3-1 հաշվով: Մեր հավաքականից գոլերի հեղինակներ դարձան Էդուարդ Ավագյանը, Նորայր Տիգրանյանն ու Վարդան Խաչատրյանը:**

## Վերջին տուրի խաղերը՝ նույն ժամին

**Եվրո-2012-ի ընտրական մրցաշարի B խմբի մասնակիցները, որոնց թվում է նաեւ Հայաստանի հավաքականը, պայմանավորվել են վերջին տուրի հանդիպումները սկսել միեւնույն ժամին: Վերջին տուրը կայանալու է հոկտեմբերի 11-ին: Այդ օրը Հայաստանի հավաքականը կհյուրընկալվի Իռլանդիայի ընտրանուն: Ըստ պայմանավորվածության, խաղը պետք է սկսվի Երեւանի ժամանակով ժամը 22:45-ին: Նույն օրը կմրցեն Ռուսաստանն ու Անդորրան, Մակեդոնիան ու Սլովակիան:**

## Հանդբոլի յուրօրինակ մրցախաղ

**Մինսկում յուրօրինակ ձեւով է նշվել հանդբոլի օրը: Քաղաքի մարզասրահում առանց ընդմիջման 32 ժամ շարունակ հանդբոլի հանդիպում է անցկացվել, որին մասնակցել են 5-78 տարեկան մոտ 1000 սիրողական հանդբոլիստներ: Խաղն ավարտվել է 977-973 հաշվով: Ռեկորդային այս ցուցանիշը գրանցվել է ԱՊՀ եւ Բալթյան երկրների ռեկորդների գրքում: Բելառուսները մտադիր են դիմել Լոնդոն՝ Գինեսի ռեկորդների գրքում եւս գրանցվելու համար:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

## Օրվա հետքերով

# Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց Թեմի հոգեւոր զարթոնքը ոմանց սրտով չէ



Հունիսի 10-ին հայաստանյան գրեթե բոլոր ինտերնետային կայքերն ու մամուլը տպագրեցին մի նամակ, որի հեղինակը մոսկվաբնակ ոմն Արսեն Մարգարյանն էր: Նամակում ասվում էր, որ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի հովանու ներքո գործող «Հայասա» պարի խմբի անդամները աշխատավարձ չեն ստանում, համերգներից ակնկալվող հոնորարներն իրենց չեն հասնում եւ սա այն դեպքում, երբ խումբը ֆինանսավորվում է Մոսկվայի երեք մեծահարուստ հայերի կողմից: Նկատի ունենալով նամակի անհիմն եւ դատարկ զազրախոսությունը, հարկ չհամարեցինք պաշտոնական պատասխան գրել: Սակայն հետամուտ եղանք գտնելու հեղինակին, քանի որ նամակի տակ կար գրված հեռախոսահամար: Պարզվեց, որ նման հեռախոսահամար գոյություն չունի, ինչպես եւ գոյություն չունի Արսեն Մարգարյան անունով մարդ: Ծածկանունով հանդես եկող խավարամիտ հեղինակն ու իր համախոհները սեւ գործն ավարտված չհամարելով՝ հունիսի 16-ին նորից հայտարարություն տարածեցին, թե իբր Սրբազան Հոր «ենթակաները» փորձել են պարողներից ճշտել, թե ով է «անսամբլի գումարները գրպանելու» մասին լուրը տարածել: Մեկ անգամ էլ փորձելով ստահոդ լուրերով ապակողմնորոշել ընթերցողներին:

Բավակա՛ն է: Որքան պիտի անգիտությունն ու անբարոյականությունը առաջնորդի ձեզ:

Եթե իսկապես հոգացավ եք Մոսկվայի «Հայորդյաց տան» ու պարողների ճակատագրով, ապա ձեզ նեղություն տվեք գալ եւ տեսնել, թե ինչ պայմաններ են ստեղծված փորձերի համար, ինչ դասարաններ ու կահավորանք կա կենտրոնում, ովքեր են դասավանդում եւ ինչ միջոցառումներ են այստեղ լինում: Կենտրոնը կայացավ հինգ տարիների ընթացքում եւ հայանպաստ ակտիվ գործունեություն է ծավալում ռուս միջավայրում: Այստեղ սովորում է հինգ հարյուր հիսուն սան: Այն դարձել է մի նոր աղավնատուն ռուս միջավայրում ծնված ու մեծացած հայ մանուկների համար: Այս ամենն, իհարկե, Տ. Եզրաս Եպիսկոպոս Ներսիսյանի անձանձիր աշխատանքի արդյունքն է, ում որպես ազնիվ ու արդարամիտ հոգեւորականի թեւ ու թիկունք են հոգեւոր դասն ու Ռուսաստանի մեծազնիվ բարերարները:

Եկեղեցու հովանու ներքո գործող կենտրոնում ուսուցումն անվճար է, ինչպես եւ անվճար են երեխաներին տրամադրվող գրքերն ու գրենական պիտույքը: Կենտրոնում գործող տասնյակից ավելի խմբակներից մեկն էլ «Հայասա» պարային համույթն է, որտեղ անվճար մեր ազգային պարն ուսանում են հենց կենտրոնի սաները: Նրանց բազմաթիվ բեմական հագուստները եւ շրջագայությունների ծախսերը հոգում են հայ մանուկների ապագայով մտահոգ բարերարները: Մեր հաջողությունն է, որ «Հայասա» պարի խումբն այսօր արդեն մեծ բեմեր է բարձրանում՝ պատվով հնչեցնելով Հայաստան անունը:

Ոմանց համար ընկալելի չէ անշահախնդիր աշխատելու ու նվիրվելու ձգտումը եւ փորձեր են անում խարդախություն գտնել այնտեղ, որտեղ միայն պարզ, մարդկային սիրո վրա կառուցված սան-ուսուցիչ հարաբերություններ են:

Կենտրոնի հայանպաստ առաքելությունն, իհարկե, ձեր զազրախոսության շրջանակներում չի կարող տեղավորվել:

Հուսով ենք, որ կենտրոնի գործունեությանն ու հայանպաստ առաքելությանը ծանոթանալուց հետո զազրախոսները պիտի ամոթ զգան, իսկ ընթերցողները՝ հավաստի լուրերով տեղեկացված, որպեսզի գառան դիմակ հագած գայլերը, սուտն ու կեղծիքը որպես ճշմարտություն չկարողանան մատուցել:

**«Հայորդյաց տուն» հայեցի դաստիարակության կենտրոնի տնօրենություն**
**Տնօրեն՝ ՀՄԱՅԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

# «Ազատության» երկրորդ նավատորմիղը ամսվա վերջին կուղեւորվի Գազա

*1-ին էջից*

**Սակայն հունիսի 15-ին «Մարդու իրավունքների եւ ազատությունների» հիմնադրամը, ի դեմս ղեկավարության, պարզաբանումներ տվեց «Դունիա բյուլթենի» լրատվական գործակալությանը եւ հայտարարեց. «Նոր նավատորմիղը նշված օրը՝ հունիսի 27-ին կմեկնի Գազա: Թերեւս «Մավի Մարմարան» ուշացումով կշարժվի, բայց եւ այնպես Գազա չհասած այս նավը եւս կմիանա նավատորմիղին: Դրությունը հստակեցվելու է այսօր եւ վաղը նախատեսվող նիստերում: Սակայն ինչ էլ որ լինի, ե՛ւ «Մավի Մարմարան», ե՛ւ նավատորմիղի մյուս նավերը անպատճառ կուղեւորվեն Գազա»:**

**Մինչ հիմնադրամի ղեկավարությունը այս հայտարարությամբ Գազա ուղեւորվելու վճռականություն էր հայտնում, իսրայելական ռազմածովային ուժերը ձեռնամուխ եղան ուսումնամարզական վարժանքների, երթուղու հնարավոր ուղեգծի վրա, որպեսզի միջազգային ջրերում կասեցնեն նավատորմիղի ծովաերթը: Եվ հանկարծ երեկ «Մարդու իրավունքների եւ ազատությունների» հիմնադրամը հանդես եկավ նախորդին տրամագծորեն հակադարձ հայտարարությամբ. «Մավի Մարմարա» նավը տեխնիկական պատճառներով չի միանալու միջազգային բնույթ կրող «Ազատության» նավատորմիղի տարբեր երկրների 27 նավերին»:**

**Հիմնադրամի ղեկավարները որոշումը պատճառաբանեցին հետեւյալ կերպ. «Երբ Իսրայելը մեզ հանձնեց, «Մավի Մարմարան» լրջորեն վնասված էր: Ամեն ինչ անում ենք թերությունները վերացնելու համար, բայց չենք հասցնում: Եվրոպայից եկող նավատորմիղի ուղեւորությունը չուշացնելու համար որոշեցինք հրաժարվել «Մավի Մարմարան» Գազա ուղարկելու մտադրությունից»: Հատկանշական է, որ հայտարարության նախորդ օրը, հունիսի 16-ին, Իսրայելի կառավարությունը Մեջլիսի ընտրություններում տարած հաղթանակի առթիվ շնորհավորել էր Թուրքիայի վարչապետ Էրդողանին եւ հույս էր հայտնել, որ այս հաղթանակը թուրք-իսրայելական հարաբերություններում սպիտակ նոր էջի բացման պատեհ առիթ կհանդիսանա:**

**Այս շնորհավորանքը որեւէ կապ ունի՞ «Մավի Մարմարա» նավը Գազա ուղարկելու հիմնադրամի կատարած հետքայլի հետ, թե ոչ, չգիտենք: Բայց որ առանց «Մավի Մարմարայի» Գազա նավատորմիղ ուղարկելու նախաձեռնությունը Թուրքիայից անցնում է եվրոպական երկրներին, իսկ դա Իսրայելի համար անհամեմատ ընդունելի է, կասկած չի հարուցում:**

### Ո՞Վ Է ԱԳՐԵՍՈՐԸ

# Ո՞ւմ եւ ինչի՞ համար պետք է պատժել

«**Ազգը**» իր նախորդ համարներում առիթ ունեցել է պարզաբանելու, թե ի՞նչ է նշանակում «ագրեսոր» տերմինը: Եվ քանի հարեւան Ադրբեջանի որոշ քաղաքական շրջանակներում այն տրամադրվածությունը, որը կա հիմա, պահպանվի, մենք դեռ երկար պետք է հիշեցնենք «ագրեսոր»-ի մեկնաբանումը: Տրամաբանական է, որ ագրեսոր կողմ չի կարող լինել պաշտպանվող կողմը. ագրեսորությունը ենթադրում է անպայման նախահարձակ լինել, հետեւաբար նա, ով դրդում է պատերազմի, առավել եւս սկսում է այն, հենց ագրեսոր է, եւ ոչ թե այն կողմը, որն ընդամենը պաշտպանվում է: Հարեւան երկրում կամ չգիտեն այս սահմանումների մասին, կամ էլ «չեն հիշում», որ Ղարաբաղն ու Հայաստանը իրենք են սկսել պատերազմը Ադրբեջանի դեմ: Եթե մի պահ ընդունենք, որ այդպես է, ապա առաջանում է բավական տրամաբանական մի հարց՝ ինչո՞ւ: Չէ՞ որ ԽՍՀՄ ԼՂԻՄ երկրամասի բնակիչների ճնշող մեծամասնության՝ Ղարաբաղի հայերի միակ ցանկությունը Ադրբեջանական սոցիալիստական հանրապետության կազմից խաղաղ դուրս գալն էր, ինչի իրավունքը, համաձայն ԽՍՀՄ «նորոգված սահմանադրության», ղարաբաղցիներն ունեին: Այս իրավունքի իրականացումը, հետեւաբար, ամենեւին էլ չի կարող դիտարկվել որպես ագրեսիա: Մինչդեռ ի՞նչ է անում Ադրբեջանը. սկսում է բռնաճնշումներ իր տարածքում ապրող ազգությամբ հայերի նկատմամբ եւ փորձում դրանք հասցնել նաեւ Ղարաբաղ ու բռնի ուժով թույլ չտալ ղարաբաղցիների ինքնորոշման հիմնարար իրավունքի իրացումը: Սա՝ ագրեսիայի եւ ագրեսորի մասով: Իսկ այժմ «տեղափոխվենք» ադրբեջանական Միլլի մեջլիս, որտեղ երեկ, ըստ 1news.az կամ «առաջին ազերպրոմ» կայքի, բավական բոցաշունչ ելույթ է ունեցել շատ հարգված ազգանունով պատգամավոր տիկին Հանիրա Փաշաեւան: Վերջինս իր վրդովմունքն է հայտնել, թե ինչո՞ւ մինչեւ հիմա «ագրեսոր Հայաստանը» չի պատժվում «այնպիսի հեղինակավոր կազմակերպության կողմից, ինչպիսին է Եվրոպայի խորհուրդը»: Անշուշտ, հասկանալի է, թե ինչո՞ւ «մի շարք հեղինակավոր կազմակերպություններից» տիկին Փաշաեւան ընտրել է հենց ԵԽ-ին՝ «Հայաստանին պատժելու» համար: Բանն այն է, որ հենց այս կազմակերպությունը վերջերս բավական խիստ բանաձեւ ընդունեց Ադրբեջանում մարդու իրավունքների մասին, հետեւաբար Բաքուն «պետք է որեւէ կերպ վերականգնի հեղինակությունը», իսկ դրա համար Ադրբեջանում լավագույն միջոց համարվում է հակահայկական որեւէ գործողությունը, առնվազն՝ աղմուկը: Ինչեւէ, շարունակելով Փաշաեւան նշել է. «Նոնսենս է ստացվում, որ 21-րդ դարում ԵԽ-ի անդամ պետությունը շրջափակում է կազմակերպության անդամ մեկ այլ պետության հողերը, իրենց բնակավայրերից քշում է 1 մլն փախստականների: ԵԽ-ն պետք է հստակ եւ խիստ գնահատական տա Հայաստանի քայլերին»: Տիկին Փաշաեւան նաեւ նշել է, որ «ագրեսոր Հայաստանի» նախագահ Սերժ Սարգսյանին իրենք հարցեր են պատրաստել, որոնք պետք է տան ԵԽԽՎ-ի հերթական նստաշրջանի ընթացքում, որտեղ, հիշեցնենք, ՀՀ նախագահը ելույթ պետք է ունենա: «Ագրեսորը պետք է արժանի պատժի ենթարկվի, որպեսզի այլ հանցագործությունների չդիմի: Եթե ԵԽ-ն ցանկանում է իրոք կայունություն եւ անվտանգություն այս տարածաշրջանում, ապա պետք է խիստ գնահատականներ տա Հայաստանի գործողություններին», եզրափակել է տիկին Փաշաեւան՝ հավանաբար միլիմեջլիսականների բուռն ծափահարություններին արժանանալով:

Այժմ, մինչ ադրբեջանցի պատգամավորները իրենց «կտրուկ հարցերն» են նախապատրաստում ՀՀ նախագահին ուղղվելիք, «տեղափոխվենք» Մոսկվա, որտեղ հունիսի 16-ին լրագրողներին հանդիպեց ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Ալեքսանդր Լուկաշեւիչը: Երեկվա համարում «**Ազգ**»-ն արդեն տեղեկացրել է Լուկաշեւիչի հայտարարությունների մասին: Սակայն, ըստ ՌԴ ԱԳՆ պաշտոնական կայքէջի, մի ադրբեջանցի լրագրող հարց է ուղղել Լուկաշեւիչին, որը մեջբերենք. «Կազանում եռակողմ հանդիպման ժամանակ հնարավո՞ր են պրակտիկ քայլեր, թե հերթական անգամ պետք է դայակություն անենք ագրեսոր եւ օկուպանտ Հայաստանին»: ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչը պատասխանել է. «Նախ՝ կցանկանայի խնդրել մեր գործընկերներին, հետեւել իրենց բառապաշարին: Օգտագործված ձեւակերպումները կոռեկտ չեն, ավելին՝ գործընթացի զգայունության պարագայում միանգամայն անընդունելի են»: Առանց մեկնաբանությունների: Միայն նշենք, որ ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչն, ինչ խոսք, ի պաշտոնե չէր կարող հանդես գալ դասախոսությամբ՝ հատուկ ադրբեջանցի լրագրողի համար, թե ի՞նչ է նշանակում ագրեսոր, ո՞ւմ պետք է պատժել ու ինչի՞ համար:

**ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ**

**Վաճառվում է** LADA Priora մակնիշի ավտոմեքենա, 2008 թվականի արտադրության, 2010 թվականի վաճառք: Գտնվում է գործարանային երաշխիքի մեջ: Վազքը՝ 13 000 կմ, գույնը՝ սեւ մետալիկ, հեչբեք: Ունի՝ կոնդիցիոներ, անվտանգության բարձիկ, բորտ համակարգիչ, հայելիների եւ ապակիների (մգեցված) էլեկտրոնային կարգավորում, բարձրակարգ աուդիո համակարգ՝ Bluetooth-ով եւ iPhone/iPod միացումով: Տրվում են նաեւ 4 ձմեռային անվադողեր՝ համարյա նոր վիճակում:

**Հեռ.՝ (094) 401-337**

**Վաճառվում է**
**Daewoo Matiz Best**
մակնիշի ավտոմեքենա
2008 թ., շարժիչը 1լ, վազքը՝ 3 600 կմ, արծաթագույն, ունի կոնդիցիոներ, հայելիները եւ ապակիները էլեկտր., գերազանց վիճակ է:
**Հեռ.՝ (094) 577-578**

**Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ**

**«ԳՐԻԱՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ**

դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Այգուտ համայնքի վարչական սահմաններում, Գետիկ գետի ափին կառուցված, ընկերությանը պատկանող «Գետիկ-1» փոքր հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի արտադրության սակագնի սահմանման հայտով:

Առաջարկվող սակագինը (դրույքը)՝ 1Կվտ/ժ-ի համար 19,281 ՀՀ դրամ առանց ԱԱՀ

Առաջարկվող ամսական վճարը՝ 1Կվտ/ժ-ի համար 23,136 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:




ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա Ն 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 17.6.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: